

**ԱԶԳԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ  
ՈՒՂԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ  
Հրանտ Տեր-Աբրահամյան**

*«Ժողովուրդն ընդունում է օտար մշակույթն ապագայնանալով,  
Ցեղը՝ ազգայնացնում է իր ընդունածը»:*

**Գ. Նժդեհ**

Հայկական ինքնության կարեւոր առանձնահատկություններից մեկն այն է, որ ընդունելով արտաքին ծագում ունեցող գաղափարներ, նա ի գորու է եղել ազգայնացնել, ստեղծագործաբար մարսել ու կիրառել դրանք: Համամարդկայինը եւ ազգայինը միշտ հաջող կերպով գու-գակցվել են մեր ինքնության մեջ: Եվ արտաքին արժեքները ստեղծագործաբար ընդունելու այս հատկությունը եղել է մեր կենսունակության հիմքերից մեկը, որի շնորհիվ նաեւ գոյատեւել ենք դարերի ընթացքում: Հակառակ ուղին՝ մեկուսանալը, ինքնամփոփվելը, արտաքին աշխարհի նկատմամբ փակ լինելը, խորթ է եղել հայկականությանը:

Մյուս էական առանձնահատկությունը, որը հատուկ է մեզ, պետականության բացակայության ընթացքում ազգային եւ հասարակական բարձր ինքնակազմակերպվածության հանգամանքն է, որը եւս դարերի մեր կենսունակության կարեւոր գործոններից է եղել: Այս առանձնահատկությունը շաղկապված է աշխարհիկ նկատմամբ հոգեւորի գերակայության սկզբունքի հետ: Դեռեւս 450-ական թվականների պայքարի ժամանակ ձեւակերպված այս սկզբունքը, որով աշխարհիկ վերնախավը չի կարող հոգեւոր աշխարհի նկատմամբ տարածել իր իշխանությունը, արյունով հաստատվեց Ավարայրի ճակատամարտում՝ դառնալով խորհրդանիշ հետագա սերունդների համար, որի գաղտնիքը հենց իր համամարդկային խորհրդի մեջ էր:

Պետականության բացակայության պայմաններում, բացի եկեղեցական կազմակերպությունից, ժողովրդական ինքնակազմակերպման շատ յուրահատուկ ձեւ էր գյուղական համայնքը, որը հայերի մեջ ամենաուժեղն էր շրջակա գրեթե բոլոր ժողովուրդների համեմատությամբ: Չնայած 20-րդ դարի ընթացքում գյուղական համայնքը էապես տուժեց, սակայն դրա հոգեբանական ազդեցությունը մնաց ազգային վարքի եւ

ինքնակազմակերպման ձևերի վրա՝ թերեւս ավելի ենթագիտակցական մակարդակով:

Ազգային-հասարակական ինքնակազմակերպման հուժուրուսների օրինակներ մենք տեսնում ենք նաեւ 20-րդ դարի ընթացքում: Եկեղեցական գույքը բռնագրավելու ցարական կառավարության որոշման դէմ 1903 թվականի պայքարը աննախադէպ էր իր կազմակերպվածության աստիճանով, արդյունավետությամբ ու համազգային բնույթով, ինչի մասին նշում են նաեւ ոչ հայ հեղինակները. մի փոքր ժողովուրդ անհնազանդության զանգվածային եւ երկարատեւ գործողություն կարողացավ կազմակերպել հզոր կայսրության դէմ: Վերջապէս, ամենաբարձր աստիճանի հասարակական ինքնակազմակերպման օրինակ է 1988-ի շարժումը:

Այսպիսով, ակտիվ հասարակությունը, հասարակության իքնակառավարման գաղափարը, դրա ինքնակազմակերպման բարձր ձևերը, հանրության ազգային համախմբումը ոչ միայն հայոց պատմության բնորոշ գծերից են, այլեւ՝ մեր կենսունակության եւ արտաքին մարտահրավերներին դիմակայելու գլխավոր գործոններից:

\* \* \*

Թեւեւ ակտիվ հասարակության գաղափարը խորթ չէ հայ հասարակությանը, սակայն այսօր Արեւմուտքից բերված «քաղաքացիական հասարակության» գաղափարը պարունակում է նորամուծություններ՝ ազգային ավանդույթի նկատմամբ, որոնք պետք է ստեղծագործաբար յուրացվեն, ազգայնացվեն: Այդ գործընթացը ներառում է նաեւ այդ նորամուծությունների վերամեկնաբանումը:

Իրականում «քաղաքացիական հասարակություն» հասկացողությունը բավականին տարբեր կերպ է մեկնաբանվել մտածողների կողմից, ինչպէս եւ շատ հասկացողություններ, որոնք բնորոշ են նոր ժամանակների գաղափարախոսական համակարգերին՝ ժողովրդավարություն, սոցիալական արդարություն, անհատի ազատություն եւ այլն: Եթէ անգլոսաքսոնյան մտածողները ավելի շատ հակված էին քաղաքացիական հասարակությունը մեկնաբանել որպէս ատոմար անհատների շահերի բախման դաշտ, որը կարգավորվում է միայն այդ անհատների էգոիստական շահերի սահմանափակումներով, ապա մայրցամաքային Եվրոպայի մտածողները ավելի շատ փորձում էին տեսնել հասարակության օրգանական միասնության ասպեկտները, համախմբվածության ներուժը, հանրային ինքնակազմակերպման եւ ինքնակառավարման մեխանիզմները:

Հայոց պատմական փորձը ցույց է տալիս, որ մեր դեպքում ակտիվ հասարակությունը, հասարակական ինքնակազմակերպման բարձր ձեւերը առաջին հերթին նշանակում են համախմբվածության, վտանգներին եւ մարտահրավերներին ազգի եւ հասարակության պատասխանի ձեւեր, բազմազանության վրա հիմնված միասնություն:

Իհարկե, քաղաքացիական հասարակության գաղափարի տարածման պատրվակով՝ հզոր պետությունները նաեւ հաստատում են իրենց պետական եւ աշխարհաքաղաքական շահերը, բայց նույն նպատակներով նրանց կողմից քարոզվել եւ քարոզվում են ժողովրդավարության, սոցիալական արդարության, ազգային-ազատագրական պայքարի եւ այլ գաղափարներ, ինչը չի ենթադրում, թե այդ բոլոր հասկացողությունները ինքնին վատն են: Մենք աշխարհի հետ պետք է խոսենք «աշխարհի լեզվով» եւ օգտագործենք բառակապակցությունները մեր շահերից ելնելով:

Այսպիսով, քաղաքացիական հասարակության գաղափարը միանգամայն մեկնաբանելի եւ մարտելի է մեր ազգային ավանդույթի տեսանկյունից, միայն թե հարկ է այն ոչ թե կուրորեն ընդօրինակել, այլ ստեղծագործաբար ազգայնացնել եւ դարձնել խաղաքարտ սեփական խաղի շրջանակներում: Այս առումով, խնդիր է դառնում **ազգային հասարակության** ձեւավորումը, որը կարելի է ձեւակերպել որպես **քաղաքացիական հասարակության ազդեցություն**:

Արդյունավետ գործող ազգային հասարակության պայմաններում, հանդես գալով տարբեր գաղափարախոսական եւ քաղաքական դիրքերից, ազգային եւ հասարակական բոլոր կառույցները պետք է միասնական լինեն առանցքային մի քանի արժեքների շուրջ, որոնք են Հայաստանի եւ հայության շահը, պետության ինքնիշխանությունը, ընդհանուրի շահի գերակայությունը խմբային եւ անհատական շահերի նկատմամբ:

Այսպիսի համաձայնություն, խոսքերի մակարդակով, մեզանում կարծես թե կա, սակայն հոգեվիճակ եւ իրականություն դառնալուց այն հեռու է:

\* \* \*

Վերջում եւս մի խնդրի մասին:

Ինչպես տեսանք, պետականության բացակայության պայմաններում՝ ակտիվ հասարակությունը բնորոշ է եղել հայերիս համար: Այսօր առկա է հայոց պետականություն, եւ հարց է ծագում՝ արդյո՞ք ուժեղ պետության անհրաժեշտությունը ենթադրում է թույլ, պասիվ հասարակություն, թե՞ ուժեղ ներուժ կարող է ունենալ այն պետությունը, որը հիմնվում է ակտիվ, իքնուրույն հասարակության վրա:

Մեզանում ակտիվ եւ ինքնավար հասարակության գոյության անհրաժեշտությունը առավել քան արդարացված է:

Արտաքին մշտական վտանգի պայմաններում գոյատեւող Հայոց պետությունը պետք է հենվի ակտիվ հասարակության վրա, քանզի լուրջ վտանգների պահերին մեզանում միշտ էլ ստեղծագործական եւ կազմակերպական ունակություններով օժտված ակտիվ տարրերն են որոշիչ դեր խաղացել: Նաեւ զաղտնիք չէ, որ Հայաստանը չի կարող արտաքին թշնամու հետ մրցակցությունում՝ հենվել նյութական ռեսուրսների, քանակական ցուցանիշների վրա. հետեւաբար պետք է հենվել մարդկային որակի, հոգեբանական եւ մտավոր ներուժի վրա, ինչը եւս պահանջում է հասարակության ակտիվ վիճակ:

Այլապես մենք շեղված կլինենք մեր ավանդական ուղուց եւ չենք դիմանա տարածաշրջանային ու համաշխարհային մրցակցությանը:

Այս առումով պետք է ավելացնել նաեւ, որ մրցակցությանը դիմանալու եւ հաղթելու ավելի մեծ շանսեր ունեն բարդ կառուցվածք ունեցող հասարակությունները, որոնք ներքուստ միասնական լինելով, այնուամենայնիվ, հիմնված են բազմազանության եւ ենթահամակարգերի ինքնավարության վրա: Այս տիպի համակարգերը, այդ թվում եւ պետական համակարգերը, ավելի ճկուն են, քան պարզ եւ կենտրոնացված կոշտ համակարգերը, իրենց թվացյալ «ուժով» հանդերձ:

## **ՀԱՅՈՒԹՅԱՆ ԱՅԼԱԼԵԶՈՒ ԵՎ ԱՅԼԱԴԱՎԱՆ ԽՄԲԵՐԻ ՄԱՍԻՆ**

### ***Արսեն Հակոբյան***

Սփյուռքային գոյակերպը հայ ժողովրդի պատմական զարգացումների ուղեկիցն է եղել դեռևս վաղ ժամանակներից: Պատմական, քաղաքական, մշակութային հանգամանքների թելադրանքով տարբեր ժամանակներում մայր էթնոսից անջատվել են զանազան խմբեր, որոնք հարյուրամյակներ շարունակ բնակվելով օտար էթնոմշակութային եւ սոցիալ-քաղաքական միջավայրում՝ կրել են ինքնության դրսևորման փոփոխություններ կամ էլ ձեռք բերել առանձնահատուկ գծեր՝ իրենց անվան վրա կրելով, սակայն, «հայ» բաղադրամասը:

Հայության այս բեկորների ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս լրացնելու մեր ժողովրդի պատմության էթնիկ խճանկարը, մյուս կողմից էլ՝ անդրադառնալու մենթալային խնդիրների, քանի որ ժամանակակից հայկական մենթալիտետում դժկամությամբ են ընկալվում այլալեզու եւ այլադավան խմբերը (օրինակ՝ հայ-մահմեդականների պարագան):

Միևնույն ժամանակ այս խմբերի ուսումնասիրության միջոցով հնարավոր է դառնում անդրադառնալ էթնոպահպան մեխանիզմներին, էթնիկ զարգացումներին խոչընդոտող գործոններին:

Թեև մեզանում այլալեզու ու այլադավան բազում խմբեր կան, սակայն ստորեւ ներակայացնում ենք թաթախոս հայերին, համշենահայերին, ծաթ-հայերին:

### **Թաթախոս հայեր**

Դեռևս վաղ միջնադարում թե՛ Բյուզանդիան, թե՛ Իրանը օգտագործել են հայ զինվորականությանը իրենց ռազմական ձեռնարկներում, սահմանների պաշտպանության մեջ:

Միջին դարերում ե՛ւ Այսրկովկասի, ե՛ւ Իրանի անվտանգությունն ապահովելու առումով ռազմավարական կարեւոր նշանակություն ուներ «ճորա պահակը» կամ «Դերբենտի անցքը»: V–VI դդ. այսրկովկասյան երկրներն իր քաղաքական ենթակայության տակ զցելուն զուգընթաց, Սասանյան Իրանը լուրջ միջոցառումներ ձեռնարկեց «ճորա պահակը» ամրացնելու եւ Այսրկովկասի հյուսիսարեւելյան շրջաններում հաստա-

տուն ներկայությունն ապահովելու նպատակով: Կառուցվեցին Դերբենտի պաշտպանական համակարգերը, եւ այդ տարածքներում վերաբնակեցվեցին Իրանից տեղափոխված վերաբնակիչներ, որոնց համար առանձնահատուկ սոցիալ-քաղաքական արտոնություններ ու կարգավիճակ սահմանվեցին: Արաբական աղբյուրները Սասանյան Կուրադ I եւ Խոսրով Անուշիրվան թագավորների այս ձեռնարկների կապակցությամբ բավական հետաքրքիր տեղեկություններ են հաղորդում, ըստ որոնց՝ պարսից արքաները Այսրկովկասի հյուսիս-արեւելքում բնակեցնում են նաեւ «սիսականներին», այսինքն՝ Սյունիքից տեղափոխված զինվորական բնակչություն:

Առհասարակ, դեռեւս հայոց թագավորության գոյության ժամանակաշրջանում Սյունյաց նախարարական տան վրա էր դրված «ճորա պահակի» պաշտպանությունը, իսկ V դարում, երբ Հայաստանի զգալի հատվածը գտնվում էր Սասանյան Իրանի ենթակայության տակ եւ ուներ մարզպանության կարգավիճակ, «ճորա պահակը» շարունակում էր հայոց նախարարների համար զինվորական ծառայության վայր մնալ:

Եվ VI դարում Սասանյան Իրանի կողմից հայկական զինվորական բնակչության բնակեցումը Այսրկովկասի հյուսիս-արեւելքում, Դերբենտի շրջակայքում միանգամայն համապատասխանում էր այդ ժամանակաշրջանում առկա պատմաքաղաքական ավանդույթին: Այնուամենայնիվ, հայկական այդ խումբը իրանական վերաբնակիչների համեմատ փոքր էր, թեւ ուներ նրանց հավասար սոցիալական բարձր կարգավիճակ եւ գործառույթ: Առհասարակ, իրանական քաղաքական, մշակութային գերակայությունը Արեւելյան Այսրկովկասում մինչեւ 15-16-րդ դդ. պահպանվեց: Հայկական խմբի սոցիալական բարձր կարգավիճակը եւ գործառույթը հինք հանդիսացավ քաղաքական իշխանությամբ օժտված իրանական շերտի հետ ակտիվ փոխհարաբերությունների համար, որն էլ իր հերթին հանգեցրեց լեզվական ձուլման գործընթացների: Իրանալեզու դառնալով՝ հայկական խումբը պահպանում էր իր սոցիալական բարձր կարգավիճակը, իսկ քրիստոնեության պահպանման միջոցով այդ կարգավիճակը զուգակցվում էր հայկական խմբային պատկանելության հետ: Պատմական, ազգաբանական, լեզվական վերլուծությունը ցույց է տալիս, որ հայկական այս խմբի լեզվական ձուլման գործընթացները տեղի են ունեցել VI–XI դդ.:

Հետագա դարերում, երբ սկսվեցին տարածաշրջանի թրքացման գործընթացները, խմբի համար հայադավանության էթնոպահպան գործառույթին ավելացավ նաեւ իրանալեզվությունը՝ որպես հակազդեցություն այդ գործընթացների:

Թրքալեզու ցեղերի ներխուժումներին զուգընթաց, որպես երկրագործ նստակյաց բնակչությանը քոչվորների կողմից տրվող նվաստացուցիչ անվանում, սկսեց տարածվել «թաթ» անունը: Այն աստիճանաբար Արեւելյան Այսրկովկասի իրանական բնակչության համար ձեռք բերեց էթնոնիմի իմաստ, թեև դա տարածվեց իրանական ոչ բոլոր խմբերի վրա: Այդ արեալում բնակվող իրանալեզու դարձած հայկական խմբերը, նույնիսկ ռեզիդոնում տեղի ունեցող թրքացման ու մահմեդականացման գործընթացների պարագայում, պահպանեցին հայկական ինքնագիտակցությունն ու հայադավանությունը: Ավելին, պահպանեցին նաեւ լեզվի «փարս» կամ «ֆարս» անունը, որը հետագայում, 19-րդ դ. վերջին–20-րդ դդ. սկզբին, գիտության մեջ սկսեց կոչվել «հայ-թաթերեն» բարբառ: Ի դեպ, այդ բարբառում իրանական շերտն ավելի լավ է պահպանվել, քան թաթ-մահմեդականների ու հրեա-թաթերի լեզվում, որոնք մեծ չափով ենթարկվել են սենա-թյուրքական ազդեցության:

XVIII դ. թաթախոս հայերը բնակվում էին Ղուբայի, Դերբենտի, Շամախու մոտ մեկ տասնյակից ավելի գյուղերում:

XVIII–XX դդ. թաթախոս հայերի տարաբաշխվածության խնդիրը առավելապես զուգորդվում է տեղահանությունների ու տեղափոխությունների հետ: Մեծ ազդեցություն ու հետեւանքներ ունեցավ հատկապես 1796թ. Վ. Ջուբովի գլխավորած արշավանքը: Ռուսական զորքերի հետ միասին Դերբենտի, Մուշկուրի, Ղուբայի տարածքներից թաթախոս հայերը հարկադրված հեռանում են հիմնականում Հս. Կովկաս, հաստատվում Ղզլարում, Մոզդոկում, Սբ Խաչում /Ներակայումս՝ Բուդյոնովսկ/, Կասաեւ-Յամում /հետագայում՝ Եդեսիա/, Ղզլարի մոտ հիմնադրում Դերբենտ եւ իրենց նախկին գյուղերի անունը կրող Մուլլա-խալիլ, Ղարաջալու բնակավայրերը:

Պատմական զարգացումների ընթացքում տեղի է ունեցել նաեւ թաթախոս հայերի մահմեդականացում: Մահմեդականացված հատվածի մոտ դեռեւս XX դ. պահպանվում էին հիշողություններ իրենց «հայկական անցյալի» մասին:

Չնայած լեզվական ձուլմանը, իրանալեզու դառնալուն, ակտիվ այլէթնիկ ու այլադավան միջավայրին, հայկական այս խումբը պահպանեց էթնիկ ինքնագիտակցությունը: Էթնոպահպան կարեւոր դեր է ունեցել դավանական գործոնը՝ զուգակցված հոգեւոր եւ նյութական մշակույթի տարրերով՝ տոներ, հավատալիքներ, ծիսական ուտեստ:

Տարաբնույթ պատմական իրադարձությունների հետեւանքով Այսրկովկասում 19-րդ դ. թաթախոս հայեր բնակվում էին Մադրասա, Քիլվար, Խաչմաս գյուղերում: 20-րդ դ. սկզբի հակահայկական հալա-

ծանքները տարածվեցին նաեւ այս գյուղերի բնակիչների վրա: Խաչմասը գոյատեւեց մինչեւ 1918թ., իսկ Մադրասա եւ Քիլվար գյուղերը շարունակեցին իրենց գոյությունը նաեւ խորհրդային տարիներին, Ադրբեջանական ԽՍՀ կազմում: 1988-1989թթ. դարաբաղյան խնդրի կապակցությամբ Ադրբեջանում բռնկված հակահայկական հալածանքների հետեւանքով Ադրբեջանի տարածքի թաթախուս հայերի վերջին բեկորները հարկադրված եղան լքել իրենց բազմադարյան բնակավայրերը: Քիլվարցիներն ու մադրասեցիների զգալի մասը այժմ բնակվում են Հս. Կովկասում: Հայաստանում մադրասեցիները հավաքական ապրում են Արագածոտնի մարզի իրենց իսկ հիմնադրած Դպրեվան /Նոր Մադրասա/ գյուղում:

### **Համշենահայեր**

VIII դարում արաբական լծի տակ գտնվող հայ ժողովրդի վիճակը բավական ծանր էր: Ստեղծված սոցիալ-տնտեսական իրավիճակից դուրս գալու, բռնություններից, հետապնդումներից խուսափելու նպատակով Համամ եւ Շապուհ Ամատունի իշխանների գլխավորությամբ Արագածոտնի, Կոտայքի, Վասպուրականի Արտազ գավառից շուրջ 12 հազար բնակչություն դուրս է գալիս ու հաստատվում Բյուզանդական կայսրության Խալդեա կամ Խաղտիք գավառում, պատմական Պոնտոսում: Ղեկնող պատմիչը վկայում է, որ հունաց Կոստանդին կայսրը «տայր պատիւ նախարարացն եւ նորին հեծելոցն», իսկ հասարակ ժողովրդին բնակեցրեց արգավանդ մի երկրում:

Այնուամենայնիվ, համարվում է, որ հայ իշխանները մինչ այդ էլ որոշակի կապեր ունեցել են այդ տարածքների ու այնտեղ իշխողների հետ:

Աղբյուրների վկայությամբ Համամ Ամատունի իշխանը Տամբուր քաղաքի տեղում մի նոր ավան է հիմնում՝ իր անունով այն Համամաշեն կոչելով: Համարվում է, որ դրանից էլ առաջացել են Համշեն, Հենշին անվանումները:

Պատմաքաղաքական, ժողովրդագրական այս իրողությունների հետեւանքով էլ ձեւավորվեց Համշենի հայկական իշխանությունը: Այն մի քանի դար շարունակ գոյատեւելով՝ XV դարում մտցվեց Օսմանյան կայսրության մեջ: Համշենի վերջին հայ իշխան Դավիթը հարկադրված ապաստանում է Սպեր գավառում, այնուամենայնիվ, ենթադրվում է, որ նույնիսկ դրանից հետո էլ անմատչելի լեռնագավառների հայ «ծորպետները» իրենց ինքնավար կարգավիճակը պահպանեցին:



XVI–XVIII դդ. Օսմանյան կայսրության՝ քրիստոնյա հպատակներին բռնի մահմեդականացնելու ու թրջացնելու քաղաքականությունը տարածվեց նաև համշենահայերի վրա: Սոտ երկու դար տեւած գործընթացների հետեւանքով XIX դարում համշենահայերի մի զգալի հատված արդեն իսկ մահմեդականացված էր, թեև աղբյուրների վկայությամբ՝ իրենց կենցաղով նրանք տարբերվում էին շրջակա մահմեդական ժողովուրդներից, հայախոս էին, խոսում էին ինքնատիպ համշենահայ բարբառով, պահպանել էին քրիստոնեական բազում սովորույթներ: Այդ իսկ պատճառով այդ ժամանակաշրջանի մամուլում, գրականության մեջ նրանց մասին սկսեցին կիրառվել «կէս-կէս», «հայ-մահմեդական» տերմինները:

Համշենից ու հարակից տարածքներից պատմական տարբեր ժամանակաշրջաններում, զանազան հանգամանքների թելադրանքով տեղի են ունեցել համշենահայերի գաղթեր: Օրինակ՝ 1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմի հետեւանքով զգալի թվով քրիստոնյա համշենահայեր հաստատվեցին Աբխազիայում, ինչպես նաև Հս. Կովկասում:

1921թ. ռուս-թուրքական պայմանագրի հետեւանքով ներկայիս Աջարիայի տարածքում հայտնվեցին մահմեդական համշենահայերի կամ «հենշիլների», «հենշիլների» 6 գյուղեր, որոնց բնակիչները 1926թ. մարդահամարի տվյալներով՝ հայախոս էին, իրենց մայրենի լեզուն համարում էին հայերենը: 1944թ. այս գյուղերի բնակիչները արքայազն Միջին Ասիա՝ Ղազախստան ու Կիրգիզիա: Նրանց մի մասը հետագայում, ինչպես նաև 1988-1989թթ. տեղափոխվեց ու հաստատվեց Կրասնոդարի երկրամասում:

Ըստ համշենահայերի խնդիրներով զբաղվող որոշ ուսումնասիրողների՝ Միջին Ասիա արքայազն մահմեդական համշենահայերին միայն Ստալինի մահից հետո էր իրավունք տրվում անձնագիր ունենալ, բայց անձնագրերում «հայի» փոխարեն գրվում է «խենշիլ», երբեմն էլ՝ «թուրք», այն պատճառաբանությամբ, որ հայերը քրիստոնյա են, իսկ նրանք՝ մահմեդական:

Հետաքրքրական է, որ ներկայումս Հս. Կովկասում հաստատված «հենշիլները» անմիջական հարաբերություններ են հաստատում իրենց հարեւան եւ միեւնույն բարբառով խոսող քրիստոնյա համշենահայերի հետ: Ըստ տեղեկությունների՝ Կրասնոդարում ներկայումս «հենշիլների» մոտ հայացման միտումներ են նկատվում:

Ավելացնենք, որ մի քանի հազար «հենշիլներ» բնակվում են նաև Թուրքիայում:

## **Ծաթ-հայեր**

Այս խումբը հայության առեղծվածային եւ մինչ այժմ չուսումնասիրված բեկորներից է: Դեռեւս միջնադարյան մատենագրության մեջ այս անունով հայտնի խմբի բնութագրական հատկանիշը հունադավանությունն էր կամ քաղկեդոնիկությունը: Քաղկեդոնիկությունը սկիզբ է առնում վաղ միջնադարից, 5-րդ դարից: Ինչպես հայտնի է, Հայոց եկեղեցին չնասնակցեց Քաղկեդոնի եկեղեցական ժողովին եւ չընդունեց նրա որոշումները:

Քաղաքական, մշակութային զանազան փոխհարաբերությունների, տարաբնույթ այլ գործոնների հետեւանքով դեռեւս միջին դարերում կային հունադավան հայկական խմբեր: Ն. Մառի կարծիքով, դրանք հիմնականում գտնվում էին Հայաստանի հարավային եւ կենտրոնական շրջաններում ու կարելի էր են ունեցել միջնադարյան հայկական իրականության մեջ: Հետագա զարգացումների ընթացքում, Հայոց եկեղեցու ամրապնդմանը զուգընթաց, նրանք ապագայնացման փուլեր են ապրում՝ ձուլվելով վրացական, հունական եւ սիրիական հոսանքների մեջ:

Ըստ Մխիթարյանների՝ «ծաթ-ծայթը» նշանակում է «անլիարժեք», «կիսատ», այսինքն՝ «ոչ հույն, ոչ հայ» կամ «կես հայ, կես հույն»:

XV դարում Մխիթար Ապարանցին գրում է, որ ծաթ-հայերը լեզվով, գրով եւ ծագմամբ հայ են, սակայն հույն՝ դավանանքով:

Հետաքրքրական է, որ դեռեւս XIX դարում Ակնում բնակվող հունադավան հայերի ժամասացության լեզուն հայերենն էր: Ըստ տեղեկությունների՝ հունադավան հայեր մինչեւ վերջին ժամանակներս բնակվում էին Վրաստանի Ծալկայի շրջանի Կերյակ գյուղում, իսկ մինչ XX դարի սկիզբը՝ նաեւ Մեսխեթ-Չավախքում:

Առհասարակ, խմբի մշակութային դիմագծի, ինքնության, պատմական զարգացումների խնդիրները մինչեւ այժմ ուսումնասիրված չեն:

## **ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԽԱԶԻԱՅՈՒՄ Կարեն Վերանյան**

Աբխազիայի ներքաղաքական իրավիճակը վերջին մի քանի ամիսների ընթացքում բավականին փխրուն է: Իրադրության վրա բացասական ազդեցություն թողեցին մի կողմից՝ աջարական ճգնաժամը, մյուս կողմից՝ Աբխազիայի իշխանությունների նկատմամբ Վրաստանի ղեկավարության կողմից գործադրվող հոգեբանական ճնշումները (Վրաստանի նախագահ Մ. Սահակաշվիլին աջարական հարցի լուծումից հետո հայտարարեց, որ «եթե Վրաստանում տեղի ունենա հաջորդ հեղափոխությունը, ապա այն կիրականացվի Աբխազիայում»): Սակայն, ի տարբերություն Աջարիայի, Աբխազիայի խնդիրն առավել բարդ է. եթե Աջարիան բնակեցված է էթնիկ վրացիներով, ապա Աբխազիայի դեպքում վրացական կողմին անհրաժեշտ է լուծել վրացի եւ արխազ ժողովուրդների միջեւ խաթարված վստահության հարցը:

Աբխազիայի ներքաղաքական իրադրության լարվածությանը նպաստում է նաեւ իշխանական թեժ պայքարը, որն ավելի է սրվել ս.թ. հոկտեմբերին այնտեղ նախատեսվող նախագահական ընտրությունների նախաշեմին:

### **Ընդդիմադիր դաշտը**

Աբխազիայի ներքաղաքական դաշտում գործում են գլխավորապես երկու հակադիր բեւեռ՝ մի կողմից Աբխազիայի նախագահ Վ. Արժինբայի (նա 13 տարի շարունակ միանձնյա կառավարել է երկիրը) իշխանական ապարատը, մյուս կողմից՝ գործող իշխանության ընդդիմադիր «Անցախարա», «Միասնական Աբխազիա» եւ «Այտայրա» քաղաքական շարժումները: Սակայն ընդդիմությունը միահամուռ չէ, եւ նրա շարքերում կան տարաձայնություններ:

«Անցախարա» շարժումը Աբխազիայի գործող իշխանության գլխավոր ընդդիմադիր ուժերից մեկն է: Այն ներկայացնում է 1992–1993թթ. վրաց-աբխազական պատերազմին մասնակցած վետերաններին՝ Աբխազիայի այն ազգայնականներին, որոնք հակամարտության տարիներին պայքարել են Աբխազիայի անկախության, պետականության պահպանման համար: Շարժման առաջնորդները մեծ հեղինակություն են վայելում

արխագ ժողովրդի տարբեր խավերում, եւ հետպատերազմյան ժամանակաշրջանում բնակչության շրջանում շատ էր խոսվում իշխանությունը զինվորականներին հանձնելու անհրաժեշտության մասին:

«Ամցախարայի» առաջնորդները կոչ են անում նախագահ Վ.Արծինբային հրաժարական տալ՝ կապված վերջինիս առողջական վատ վիճակի եւ պարտականությունների լիակատար իրագործման անկարողության հետ (Վ. Արծինբան տարվա մեջ 8 ամիս բուժվում է Մոսկվայի կենտրոնական հիվանդանոցում եւ գրեթե կորցրել է ազդեցությունը հանրապետության ներքաղաքական գործընթացների վրա):

«Ամցախարա» շարժման առաջնորդների շարքերը համալրում են հանրապետության նախկին զինկոմիսար Վալերի Քիշմարիան, վետերան հրամանատարներ Սերգեյ Դբարը, Ապոլոն Շինկուբան, Գարի Սամանբան, Վիտալի Տարնավան, Միրոն Պաշալիան եւ այլոք:

«Միասնական Աբխազիա» շարժումը ստեղծվեց այս տարվա հունվարին՝ կապված հանրապետությունում ներքաղաքական իրավիճակի լարվածության հետ: Շարժման նախագահն է Աբխազիայի Առեւտրարդյունաբերական պալատի փոխնախագահ, «ՄԻԿԱՐՏ» համատեղ ձեռնարկության գլխավոր տնօրեն, 54-ամյա ձեռներեց Արթուր Միկվաբիան:

Զգալի է նաեւ «Այտայրա» շարժման քաղաքական կշիռը հանրապետության հասարակության շրջանում: Շարժման առաջնորդները մեղադրում են Աբխազիայի իշխանական մարմիններին՝ հանրապետության ներքաղաքական իրավիճակի լարվածության վերացման, հանցագործության դեմ պայքարի անկարողության մեջ:

Ս.թ. հունիսի 16-ին «Ամցախարա» եւ «Միասնական Աբխազիա» հասարակական-քաղաքական շարժումները որոշեցին միավորվել՝ ստեղծելով միասնական ընդդիմադիր ճակատ: Նորաստեղծ ընդդիմադիր կուսիցիան այսպիսով լուրջ հայտ ներկայացրեց՝ գալիք նախագահական ընտրությունների նախաշեմին ամուր դիրքեր ապահովելու համար:

## **Ներքաղաքական սրացումներ**

Աբխազիայում իշխանության համար մղվող քաղաքական պայքարն ավելի է թեժանում՝ հաճախ ուղեկցվելով քաղաքական բռնություններով: Ս. թ. փետրվարի 3-ին քաղաքական սպանության զոհ է դառնում «Ամցախարա» ընդդիմադիր շարժման հիմնադիրներից մեկը՝ գործարար Սալիբեյ (Ակա) Արծինբան: Վրաց-աբխազական պատերազմի ընթացքում նա Սուխումի ուղղությամբ գործող գումարտակի հրամանատարն էր: Որոշ տվյալների համաձայն, Սալիբեյ եւ Վլադիսլավ Արծինբանների միջեւ

տարածայնությունները սկսվել են այն բանից հետո, երբ Ս. Արծիւնբան առաջարկել էր նախագահին՝ վերածեւավորել «Անցախարան» նախագահանէտ քաղաքական կուսակցության:

Քաղաքականության հերթական զոհը դառնում է «Անցախարա» շարժման մեկ այլ առաջնորդ, Սուխումի նախկին քաղաքապետ Գարի Այբան (ս.թ. հունիսի 9-ին նա հրազենից սպանվել է Աբխազիայի մայրաքաղաքի կենտրոնում գտնվող սեփական տան մուտքի մոտ): Գ.Այբայի սպանությունը մեծ իրարանցում առաջացրեց Աբխազիայի հասարակության շրջանում:

Ս.թ. հունիսի կեսերին լրատվամիջոցներում հայտնվեցին լուրեր այն մասին, թե Աբխազիայի երեք բարձրաստիճան պաշտոնյաներ հրաժարական են տվել. նշվում էին Աբխազիայի վարչապետի առաջին տեղակալ Ասթանուր Թարբայի, ԱԳ նախարար Սերգեյ Շամբայի (զբաղեցնում է այս պաշտոնը 1997թ. ի վեր) եւ պետանվտանգության ծառայության ղեկավար Գիվի Ազրբայի անունները: Աբխազիայի վարչապետ Ռաուլ Խաջիմբան, որը պաշտոնավարում է՝ սկսած 2003թ. ապրիլից, հերքել է տեղական ուժայինների հրաժարականի մասին լուրերը՝ հաստատելով միայն Սերգեյ Շամբայի հրաժարականի մասին տեղեկությունը: Իսկ ս.թ. հունիսի 18-ին Աբխազիայի նախագահ Վ. Արծիւնբան ստորագրում է հանրապետության նախագահի վարչության ղեկավարի պաշտոնից Գենադի Գագուլիայի ազատման մասին հրամանը (Գ. Գագուլիան այս պաշտոնը ստանձնել էր 2003թ. դեկտեմբերին):

Գ. Այբայի սպանությունը եւ դրան հաջորդած աբխազական իշխանությունների հասցեին ընդդիմադիր հասարակական շարժումների առաջնորդների կողմից հնչող՝ հանցագործության դեմն առնելու անկարողության մեղադրանքները, ինչպես նաեւ կառավարության երեք առանցքային նախարարների հրաժարականի մասին լուրերը տեղական փորձագետների կողմից գնահատվեցին միանշանակորեն՝ հանրապետությունում սկսվել է բիրտ պայքար երկրի առաջնորդի պաշտոնին տիրելու համար:

### **Նախագահի թեկնածուի համար անհրաժեշտ 5-ամյա արտոնակարգը**

«Նախագահի ընտրությունների մասին» սահմանադրական օրենքն ընդունվել է դեռեւս 1999թ. նախագահական ընտրությունների նախաշեմին: Փաստաթուղթն արգելում էր հաշվառել նախագահի այն թեկնածուին, որն ազատ չի տիրապետում աբխազերենին: Այս լեզվական սահմանափակումը ընդդիմությունն ընդունեց առանց լուրջ քննադատությունների:

2004թ. հոկտեմբերի սկզբին Աբխազիայում կայանալիք նախագահական ընտրությունների նախաշեմին քաղաքական թեժ վիճաբանությունների առարկա է դարձել այն հարցը, թե արդյոք կարող է նախագահական ընտրություններին թեկնածությունը դնել այն քաղաքական գործիչը, որը հանրապետության տարածքում չի բնակվել վերջին հինգ տարիների ընթացքում: Նախագահի թեկնածուի համար անհրաժեշտ 5-ամյա արտոնակարգի պահպանումն անմիջապես արժանացավ ընդդիմության, հատկապես ընտրություններին սփյուռքի հայրենակցի «սցենարի» կողմնակիցների քննադատությանը:

5-ամյա բնակության արտոնակարգի պահպանման օգտին են հանդես գալիս հիմնականում Վ. Արժինբայի վարչակարգը, նրա կողմնակիցները «Ապսնի» հանրապետական կուսակցությունից եւ իշխանամետ «Ախաարա» շարժման ներկայացուցիչները:

Արտոնակարգի պահպանման հարցում տարածայնություններ նկատվեցին նաեւ վրաց-աբխազական պատերազմի վետերանների «Անցախարա» շարժման շարքերում. եթե շարժման քաղխորհուրդը հանդես եկավ արտոնակարգի պահպանման օգտին, ապա Օչամչիրի շրջանի դաշտային հրամանատարների խումբը դիմեց խորհրդարան՝ պահանջելով վերացնել արտոնակարգը:

### **Աբխազիայի հավանական նախագահի «ռուսական» եւ «ամերիկյան» տարբերակները**

Պաշտոնական Մոսկվան ուշադիր հետեւում է Աբխազիայի ներքաղաքական վերջին զարգացումներին: Ինֆորմացիոն դաշտ են «ներքաշվում» վատառողջ աբխազ առաջնորդին փոխարինող պոտենցիալ թեկնածուները. նշվում են Ալեքսանդր Անկվաբի, Անրի Ջերգենիայի եւ այլ քաղաքական գործիչների անունները:

1978-1992թթ. Ա. Ջերգենիան (Վ. Արժինբայի աներորդին) Աբխազիայի Հանրապետության Գերագույն դատարանի անդամ էր, իսկ 1992թ. ի վեր՝ հանրապետության գլխավոր դատախազը, 2001թ. հունիսից նա վրաց-աբխազական բանակցություններում Վ. Արժինբայի հատուկ ներկայացուցիչն էր: 1999թ. նա զբաղեցրել է վարչապետի պաշտոնը: Հետագայում Ա. Ջերգենիան, ըստ երեւոյթին ցուցաբերելով իշխանական հավակնություններ, հայտնվում է աբխազ առաջնորդի ընդդիմադիրների առաջին շարքերում:

Ա. Ջերգենիայի հետ կապված՝ պաշտոնական Մոսկվայի համար առաջանում են որոշ հարցեր. ըստ որոշ աղբյուրների, Ա. Ջերգենիան

սերտ հարաբերություններ ունեն թուրքիայի գլխավորապես գործարար շրջանակների հետ: Նշենք, որ հանրապետությունում «թուրքական» ազդեցությունը բավականին ուժեղ է, եւ մի քանի անգամ Վ. Արծինբան լրջորեն պայքարել է թուրքիայի հետ հարաբերությունների զարգացման ջատագովների դեմ (հանրապետությունում փաստացի սառեցվել է մուսուլմանական քարոզչությունը, իսկ ուղղափառ եկեղեցու ազդեցությունն անընդհատ աճում է):

«Այտայրա» ընդդիմադիր շարժման առաջնորդ Ալեքսանդր Անկվաբը ԽՍՀՄ տարիներին ղեկավարել է Վրաստանի ԱԳ նախարարության քաղաքական բաժինը (70-ականներին ՆԳ նախարար Էդ. Շեւարդնաձեի ամենամտերիմ մարդկանցից էր): Վրաց-աբխազական հակամարտության տարիներին Ալ. Անկվաբը գլխավորում էր Աբխազիայի ՆԳ նախարարությունը: Հակամարտության ավարտից հետո Վ. Արծինբան պաշտոնանկ արեց Ալ. Անկվաբին: Ըստ երեւութի, նախարարի հեղինակությունը բավականին բարձրացել էր, ինչը կարող էր թուլացնել աբխազ առաջնորդի իշխանական դիրքերը:

Ներկայումս Ալ. Անկվաբը բնակվում է Մոսկվայում, զբաղվում գործարարությամբ (ըստ որոշ տվյալների, Մոսկվայում նրան են պատկանում շուրջ 30 խանութ ու տասնյակ ավտոլիցքավորման կայաններ), ակտիվ մասնակցություն ցուցաբերում նաեւ Աբխազիայի հասարակական-քաղաքական կյանքում:

Ամերիկյան իշխանական շրջաններում նախատեսվում է Թբիլիսիի ու Սուխումի փոխհարաբերությունների մի նոր «մոդել»՝ շեշտը դնելով ԱՄՆ-ում բնակվող աբխազական այն շրջանակների վրա, որոնք կողմնակից են Վրաստանի հետ հարաբերությունների կարգավորմանն ու Վրաստանի պետաիրավական դաշտում Աբխազիայի ներառմանը: Պաշտոնական Թբիլիսին, ըստ որոշ աղբյուրների, ավելի է ընդառաջ գնում ամերիկյան «նախաձեռնությանը»՝ աբխազ առաջնորդի հավանական թեկնածուների շարքում նշելով ԱՄՆ աբխազական սփյուռքի ղեկավար Ինալա Կազանային: Վերջինս 8 տարի շարունակ եղել է Վ. Արծինբայի անձնական ներկայացուցիչը ԱՄՆ-ում:

**ՊԱՅՊԱՆՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՄՆ-ՈՒՄ**  
*Ռուբեն Սաֆրաստյան*

**4. «ՆԵՈԿՈՆՆԵՐՆ» ԸՆԴԴԵՄ «ՊԱԼԵՈԿՈՆՆԵՐԻ» ԵՎ ԱՇԽԱՐՀԻ**

20-րդ դարի վերջին տասնամյակը նշանավորվեց կարելու տեղաշարժերով ԱՄՆ հասարակական-գաղափարական կյանքում: Կոմունիզմը, որը տասնամյակներ շարունակ ընկալվում էր որպես ամերիկյան արժեքային համակարգի հիմնական ախտյան, «սառը պատերազմում» Խորհրդային Միության եւ նրա արբանյակ երկրների կրած պարտության հետեւանքով շատ արագ դադարեց որեւիցե վտանգ ներկայացնել: Կոմունիստական գաղափարախոսության ու քաղաքական համակարգի պարտությունը ԱՄՆ մտավորական շրջանակներում մեկնաբանվեց առաջին հերթին որպես ազատական գաղափարների աննախադեպ հաղթանակ: Սկսվեց ազատականության՝ իբրեւ գաղափարական-քաղաքական հոսանքի նոր վերելք, եւ այն որոշ ժամանակ գրավեց գերակայող դիրք պահպանողականության նկատմամբ: Այդ մթնոլորտի արդյունքը եւ միաժամանակ՝ նրա խթանիչն էր Դեմոկրատական կուսակցության թեկնածու Բիլ Բլինթոնի հաղթանակը 1992թ. նախագահական ընտրություններում:

Մինչ ազատական գործիչների մի ստվար խումբ, ընդգրկվելով կառավարման համակարգի մեջ, ջանք չէր խնայում նախկին կոմունիստական երկրներում տարածելու ազատական գաղափարները եւ տնտեսավարման ու կառավարման ձեւերը, միաժամանակ «հանդարտեցնելով ու կայունացնելով» նախկին Հարավսլավիան, պահպանողականները, ինչպես դա բնորոշ է այդ մտածելակերպի տեր մարդկանց, գործելուց առաջ փորձեցին ըմբռնել եւ մեկնաբանել ստեղծված իրողությունը: Հակակոմունիստական ուղղվածության պահպանողականները փորձում էին գտնել նոր գաղափարական թիրախ, որը պիտի փոխարիներ կոմունիզմին, իսկ «ավանդական» պահպանողականները զբաղված էին ազատականների շլացուցիչ հաղթանակը հակակշռելու ուղիների փնտրտուքով:

Այդ տարիներին տպագրվեցին եւ շատ արագ համաշխարհային ճանաչման արժանացան պահպանողական ուղղվածության հասարակագետներ *Ֆրենսիս Ֆուկույամայի* ու *Սամուել Հանտինգտոնի* աշխատությունները, որոնք արտահայտում էին ամերիկյան պահպանողականության շրջանում տարածում գտած՝ միմյանց հաճախ հակադրվող եւ նույնիսկ իրարամերժ մտայնությունները եւ ընկալումները:



Նրանցից առաջինը, կոմունիզմի պարտությունից ու ժողովրդավարական արժեքների լայն տարածում ստանալուց խորապես տպավորված՝ ազդարարեց հականախարտությունների վրա հիմնված գաղափարականացված «դասական» պատմության ավարտը եւ նոր՝ «իդեալական ժամանակների» գալուստը, որի որոշիչ գործոնն է լինելու արեւմտյան լիբերալ-դեմոկրատիայի համամոլորակային գերիշխանությունը:

Մինչդեռ երկրորդը, հենվելով նույնաման հիմնադրույթների վրա, եկավ հակադիր եզրակացությունների. ըստ Ս. Հանտինգտոնի՝ գաղափարական հականախարտությունը փոխարինվելու է տարբեր քաղաքակրթությունների միջև հականախարտամբ:

1990-ական թթ. կեսերին պահպանողականների տեսական պրպտումների շրջանը ավարտվում է, եւ նրանք ակտիվացնում են իրենց քաղաքական գործունեությունը: 1994թ. նրանց աջակցությամբ Հանրապետական կուսակցությունը կարելու հաղթանակ է տանում ընտրությունների ժամանակ եւ իր հսկողության տակ է վերցնում Կոնգրեսը: Պահպանողականների շրջանում տարվող սուր գաղափարական վեճերի պայմաններում առաջին պլան են մղվում երկու խմբավորում, որոնց հետագա տասնամյակի ընթացքում վիճակված էր կենտրոնական դեր ստանձնել ամերիկյան պահպանողականության շրջանակներում:

Այդ երկուսից առավել հզորն ու փորձառուն եւ, ինչպես պարզվեց հետագայում, նաեւ քաղաքական առումով ավելի ճկունը, անտարակույս, *նոր պահպանողականների (նեոկոնսերվատորների)* կամ ինչպես նրանց կարճ անվանում են՝ *նեոկոնների* խմբավորումն էր: Այդ խմբավորման ավագ սերնդի ներկայացուցիչներից մի քանիսը երիտասարդ տարիներին ունեցել էին ձախակողմյան հայացքներ եւ հարել էին ամերիկյան տրոցկիստական շարժմանը, իսկ հետագայում, որդեգրելով հակակոմունիստական ու պահպանողական հայացքներ, նշանակալից դերակատարություն էին ստանձնել երկրի գաղափարական-քաղաքական կյանքում, հատկապես նախագահ Ռ. Ռեյգանի պաշտոնավարման տարիներին: Նրանցից, ինչ խոսք, անհրաժեշտ է հիշատակել *Իրվին*՝ *Քրիստոլին*, որը համարվում է նեոկոնների «կնքահայրը»: 1999թ. նա հրատարակեց տասնամյակների ընթացքում գրած հոդվածների ժողովածուն՝ «Նեոկոնսերվատիզմ. մի գաղափարի ինքնակենսագրություն» հավակնոտ վերնագրով:

Նեոկոնների ավելի երիտասարդ սերնդի ներկայացուցիչները, հետեւելով ավագներին, աչքի էին ընկնում ծայրահեղ հակակոմունիզմով: Սակայն, ի տարբերության «ծերուկների», նրանք կոմունիզմի փլուզումից հետո բավական արագ կողմնորոշվեցին եւ իրենց գաղափարական քարոզի հիմնական թեման դարձրին աշխարհում ԱՄՆ բացարձակ

գերակայության հաստատման գաղափարը: «Երիտասարդ» նեոկոնների առաջնորդն է Իրվինը՝ Քրիստոլի որդին՝ Վիլյամ Քրիստոլը, որի հրատարակած «Վիքլի Ստանդարտը» համարվում է նեոկոնսերվատորական կարեւորագույն պարբերականը:

1997թ. Վիլյամ Քրիստոլը մի խումբ համախոհների հետ, որոնց թվում էր նաեւ բազմիցս Հայաստան այցելած՝ հետախուզության նախկին սպա Բրյուս Ջեքսոնը, հիմնադրեց «Նախափոհ հանուն նոր ամերիկյան դարի» խոսուն անվանումը կրող վերլուծական կենտրոնը: Այն նպատակ ուներ բաց նամակների, հրապարակային այլ ելույթների կամ վերլուծական նյութերի միջոցով ներազդել Քլինթոնի վարչակազմի արտաքին քաղաքականության վրա, որը նեոկոնների կողմից ընկալվում էր որպես երկչոտ եւ ամերիկյան հզորությանը ոչ սազական, եւ հաղորդել նրան ավելի վճռական բնույթ:

Այդ կենտրոնը գործում է մինչեւ օրս: Նրա աշխատանքներին մասնակցում են ամերիկյան վերնախավի պահպանողական թեւի շատ ականավոր ներկայացուցիչներ, որոնք կիսում են նեոկոնների հայացքները: Մասնավորապես, կենտրոնը ոչ միայն անվերապահորեն պաշտպանում է Բուշ-կրտսերի վարչակազմի քաղաքականությունը Իրաքի նկատմամբ, այլ նաեւ արդարացնում է այն՝ հիմնավորելով իր այդ մոտեցումը աշխարհում ԱՄՆ իշխող դերը ապահովելու անհրաժեշտությամբ:

2000թ. նախագահական ընտրություններում Ջ. Բուշ-կրտսերի հաղթանակից հետո նեոկոնները, օգտագործելով անձնական սերտ կապերը նորընտիր նախագահի ընտանիքի ու փոխնախագահի հետ (Օրինակ, Ջեք Բուշը՝ նախագահի եղբայրը, սերտորեն համագործակցում է վերոնշյալ կենտրոնի հետ) ակտիվորեն ներգրավվեցին հանրապետական վարչակազմի արտաքին քաղաքականության պլանավորման ու իրականացման գործընթացի մեջ: Նրանց ներկայացուցիչները կարեւոր պաշտոններ ստացան Պենտագոնում ու Պետդեպարտամենտում, ինչպես նաեւ երկրի նախագահի ու փոխնախագահի աշխատակազմերում: Ամերիկյան մամուլի պնդմամբ, նախագահ Բուշը գտնվում է նեոկոնների ուժեղ ազդեցության տակ:

Նեոկոնների ճնշման ներքո ամերիկյան արտաքին քաղաքականությունը վերջին տարիներին ստացավ պարզորոշ արտահայտված կայսերապաշտական ուղղվածություն: Նրանք գտնում են, որ Ամերիկան, լինելով ներկայիս աշխարհի միակ գերտերությունը, կարող է իրեն թույլ տալ թելադրել իր կամքը ողջ աշխարհին, այդ թվում նաեւ դաշնակիցներին եւ ՄԱԿ-ին: Ըստ էության, նեոկոնների գաղափարախոսները առաջ քաշեցին ԱՄՆ՝ կայսրության վերածման եւ աշխարհում այդ

կայսրության միանձնյա իշխանության հաստատման հայեցակարգը, իսկ կառավարման բարձր օղակներում պաշտոնավարող նրանց կուսակիցները՝ ահաբեկչության դեմ պայքարի ու աշխարհում ժողովրդավարության հաստատմանը աջակցելու քողի ներքո անցան այդ հայեցակարգի պրակտիկ իրականացմանը:

Այդ հայեցակարգի իրականացման ճանապարհին ԱՄՆ-ը պատերազմի մեջ մտավ Իրաքի դեմ, վատացրեց հարաբերությունները մի շարք կարելու դաշնակիցների հետ, թշնամացավ մուսուլմանական աշխարհին, մանավանդ՝ արաբական երկրներին, միակողմանի պաշտպանեց Իսրայելին պաղեստինա-իսրայելական հակամարտությունում: ԱՄՆ կերպարը աշխարհում ստացավ հստակ արտահայտված բացասական երանգավորում:

Ավելորդ չէր լինի նշել, որ նեոկոնների մեջ մեծ թիվ են կազմում հրեաները՝ ինչպես հուդայականները, այնպես էլ քրիստոնյաները: Թերեւս, դրանով է գլխավորապես պայմանավորված նրանց անվերապահ աջակցությունը Իսրայելին միջազգային թատերաբեմում, ինչպես նաեւ սերտ համագործակցությունը ԱՄՆ հրեական լոբբիի հետ: Նրանցից ոմանք, ինչպես, օրինակ, պաշտպանության նախարարության նախկին բարձրաստիճան պաշտոնյա եւ հեղինակավոր Պաշտպանության քաղաքականության խորհրդի նախկին նախագահ Ռիչարդ Փեռլը, վաշինգտոնյան իշխանական միջանցքներում հայտնի են նաեւ որպես Թուրքիայի նվիրյալ բարեկամներ:

Պահպանողական այլ հեղինակավոր խմբավորման ներկայացուցիչներին՝ ի հակադրություն *նոր պահպանողականների*, անվանում են *հին պահպանողականներ* (պալեոկոնսերվատորներ) կամ կարճ ձեւով՝ *պալեոկոններ*: Նրանցից առավել հայտնի գործիչը խմբավորման առաջնորդ համարվող Փաթ Բյուքենենն է: Լինելով տաղանդավոր հրապարակախոս, նա մեծ համբավ էր ձեռք բերել՝ հանդես գալով ամերիկյան ապրելակերպի եւ աշխարհընկալման ավանդույթների անաղարտ պահպանման օգտին եւ կատաղի քննադատության ենթարկելով բոլոր տեսակի շեղումներն ու նորամուծությունները: Ի տարբերություն նեոկոնների, նրան չէր հաջողվել աջակցություն ստանալ Հանրապետական կուսակցության կողմից, այդ պատճառով նա 1990-ական թթ. նախագահական ընտրություններում հանդես էր գալիս որպես անկախ պատգամավոր, իսկ 2000թ. նույնիսկ փորձ արեց ստեղծել առանձին պահպանողական կուսակցություն: Պալեոկոնների ավելի երիտասարդ սերնդի ականավոր դեմքերից է *«Ամերիկան Կոնսերվատիվ»* պարբերականի հրատարակիչ Թաքի Թեոդորակոպուլոսը:

Պալեոկոններն իրենց համարում են «դասական» ամերիկյան պահպանողականության ավանդույթների շարունակողներ, իսկ նեոկոններին մեղադրում են պահպանողական արժեքներին դավաճանության մեջ: Թ. Թեոդորակոպուլոսի պատկերավոր բնորոշմամբ՝ պահպանողական շարժումը ԱՄՆ-ում «առեւանգվել է» եւ վարկաբեկվում է նեոկոնների կողմից:

Իրենց տրամադրության տակ ունենալով բավական մեծ նյութական ու հոգեւոր ռեսուրսներ, որոնք, իհարկե, զիջում են նեոկոնների ունեցածին, նրանք անզիջում գաղափարական պայքար են մղում նեոկոնների դեմ՝ սուր քննադատության ենթարկելով մանավանդ վերջիններիս մոտեցումները արտաքին քաղաքականության հարցերում: Պալեոկոնները, շարունակելով ամերիկյան նախապատերազմյան պահպանողականության ավանդույթները, գտնում են, որ կոմունիզմի պարտությունից հետո ԱՄՆ-ը այլեւս անելիք չունի միջազգային թատերաբեմում եւ պիտի կենտրոնանա իր ներքին խնդիրների վրա. այսպիսով նրանք հանդես են գալիս *մեկուսացման* քաղաքականությանը վերադարձի օգտին:

Նրանք մեծ հետեւողականությամբ քննադատում են նաեւ նեոկոնների կայսերապաշտական նկրտումները: Այս առումով հատկանշական է Փաթ Բյուքենենի վերջերս հեղինակած գրքի վերնագիրը՝ *«Ոչ թե կայսրություն, այլ հանրապետություն»*: Նա գտնում է, որ նեոկոնների խմբակը դավադրաբար իր ձեռքն է վերցրել ԱՄՆ արտաքին քաղաքականությունը եւ այն ծառայեցնում է իր ցնորապաշտ, իրականության հետ ոչ մի աղերս չունեցող գաղափարների իրականացմանը՝ այդպիսով վտանգելով այդ հզոր պետության հեղինակությունն ու անվտանգությունը: Բյուքենենը եւ այլ պալեոկոններ ընդգծում են, որ նեոկոնների անհանդուրժողական մոտեցումը ոչ միայն թշնամի հայտարարված պետությունների, այլ նաեւ արեւմտաեվրոպական դաշնակիցների նկատմամբ հանգեցնում է ԱՄՆ իրական մեկուսացմանը: Անցյալ տարի պալեոկոնները մամուլում կազմակերպեցին քարոզարշավ՝ ի աջակցություն Ֆրանսիայի հետ դաշնակցային հարաբերությունների վերականգման, փորձելով այդպիսով մեղմել նեոկոնների կոշտ հակաֆրանսիական դիրքորոշման հետեւանքով սրված հարաբերություններն այդ երկրի հետ:

Ավելացնենք, որ դժգոհությունը նեոկոնների վարած արտաքին քաղաքականությունից վերջին ամիսներին լայն տարածում է ստացել ամերիկյան քաղաքական ու հոգեւոր վերնախավի տարբեր խմբերի շրջանում: Պահպանողական շրջանակներում ակտիվորեն քննարկվում է Բուշի հաղթանակի դեպքում նեոկոններին քաղաքական կարեւոր պաշտոններից հեռացնելու եւ այլ պահպանողականներով, այդ թվում եւ պալեոկոններով փոխարինելու տարբերակը:

**ԱՄՆ ԱՊԱԳԱՅԻ ԵՎ ԱՌԱՋԱՏԱՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ  
ԿԱՊՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐ  
Փագիկ Տեր-Հարությունյան**

«Մեծ ութնյակի» վերջերս տեղի ունեցած հանդիպումը եւ դրան հաջորդած ՆԱՏՕ-ի գագաթաժողովը, ավելի քան երբեւէ, վեր հանեցին շահերի այն հակասությունները, որոնք օբյեկտիվորեն գոյություն ունեն մի կողմից՝ մայրցամաքային Եվրոպայի ու Ռուսաստանի, մյուս կողմից՝ ԱՄՆ միջեւ: Մասնավորապես, «Մեծ ութնյակի» հանդիպման ժամանակ տարածայնությունները վերաբերում էին Իրաքի հիմնախնդրին: Ֆրանսիայի, Գերմանիայի եւ Ռուսաստանի ղեկավարները դեմ արտահայտվեցին իրենց ռազմական ստորաբաժանումները Մերձավոր Արեւելք ուղարկելու ամերիկյան ծրագրին:

Կարելի է ենթադրել, որ «մնացյալ» աշխարհի ներկայացուցիչները, օգտվելով ԱՄՆ ունեցած համակարգային բնույթի դժվարություններից, փորձում են ինքնահաստատվել գլոբալ քաղաքականությունում:

**Բազմաբեւեռ աշխարհակարգի ձեւավորման միտումները**

Ստեղծված իրողությունը վկայում է, որ խորհրդային կայսրության կազմալուծումից հետո ձեւավորված միաբեւեռ աշխարհակարգը գտնվում է փոփոխությունների եզրին: Այսօր բավականաչափ իրեղեն հիմքեր կան ենթադրելու, որ ձեւավորվող Եվրակայսրությունը, որն իր ՀՆԱ չափանիշով (մոտ \$10 տրիլիոն) գրեթե հավասարվել է ԱՄՆ-ին, աննախադեպ արագությամբ հզորացող Չինաստանը, վերականգնման միտումներ ցուցաբերող Ռուսաստանը, ինչպես նաեւ այլ տերություններ, որոնցից առաջին հերթին հիշատակման արժանի է Իրանը, ի զորու են այս կամ այն բնույթի մարտահրավեր նետել ԱՄՆ մենատիրությանը: Ավելին. նկատվում է նաեւ բնական մի օրինաչափություն, համաձայն որի՝ վերոհիշյալ ուժի կենտրոնները, չնայած իրենց իսկ հարաբերություններում չլուծված խնդիրների առկայությանը, որոշ հարցերում (մասնավորապես՝ նույն Իրաքի հետ կապված) ցուցաբերում են համաձայնեցված դիրքորոշումներ ամերիկյան «հեգեմոնի» նկատմամբ: Այդ համատեքստում պետք է դիտարկել նաեւ Շանհայի կազմակերպության շրջանակներում կատարվող գործընթացները եւ Ռուսաստան–ԵՄ, ինչպես նաեւ Իրան–ԵՄ հարաբերությունների կարգավորումն ու որոշ պարագաներում՝ անգամ ջերմացումը:

Անշուշտ, այս ամենը բնավ չի խոսում այն մասին, որ ԱՄՆ-ը արդեն կորցրել է առաջատար դիրքերն աշխարհում: Նախկինի նման այդ տերությունը ռազմաքաղաքական առումով դեռևս լիարժեք մրցակիցներ չունի: Սակայն վերոհիշյալ գործընթացները առիթ են ծառայում քաղաքագետների եւ վերլուծաբանների համար, որպեսզի նրանք եւս մեկ անգամ քննարկեն ԱՄՆ՝ որպես գերտերության ապագան ու վեր հանեն այդ հարցի վերաբերյալ եղած հին եւ նոր մոտեցումները: Համաձայն մոտեցումների մի մասի՝ ԱՄՆ-ին ոչ շատ հեռու ապագայում սպասում է փլուզում, նման նրան, ինչ կատարվեց Խորհրդային Միության հետ ոչ շատ վաղ անցյալում: Մյուսներն ավելի լավատեսական բնույթի են եւ ենթադրում են, որ որոշակի քաղաքական տեխնոլոգիաների կիրառման միջոցով հնարավոր է կամ դեռ երկար պահպանել ամերիկյան գլոբալ գերակայությունը, կամ էլ ապահովել գերկայսրության արժանապատիվ նահանջը դեպի նախապես պատրաստված, բայց արդեն ոչ առաջնային դիրքերը:

### **Փլուզման սցենարներ**

#### ***Ս. Հանտինգտոնի «դեմոգրաֆիական» փլուզման սցենարը:***

Ինչպես հայտնի է, ԽՍՀՄ փլուզման հիմնական պատճառներից մեկը *ազդային հարցի* հետ կապված խնդիրների ոչ բարվոք վիճակն էր: Համակարգային առաջին իսկ երերումները վեր հանեցին այն բազմաթիվ հիմնախնդիրները, որոնք կուտակվել էին ինքնավարություն–հանրապետություն, հանրապետություն – «Կենտրոն», ինչպես նաեւ որոշ հանրապետությունների հարաբերություններում:

Միացյալ Նահանգների պետական կառուցվածքը շատ ավելի ունիտար է, քան ԽՍՀՄ-ինը, եւ թվում է, թե այնտեղ ազգային խնդիրներ չպետք է առաջանան: Սակայն իրականությունն այլ է: Բազմազգ ԱՄՆ-ը դադարել է կատարել «ժողովուրդների ձուլման կաթսայի» իր նախկին դերը: Ազգային կենտրոնախույս ուժերի ձեւավորումը խթանում են նաեւ դեմոգրաֆիական որոշակի միտումներ: Համաձայն «քաղաքակրթությունների ընդհարման» տեսության հեղինակներից մեկի՝ Սամուել Հանտինգտոնի, նման զարգացումները կարող են հանգեցնել ԱՄՆ մասնատմանը եւ փլուզմանը:

Խնդրի էությունը հետեւյալն է. համաձայն այս տարվա ԱՄՆ պաշտոնական վիճակագրության տվյալների, 2050թ. ԱՄՆ բնակչության 50%-ը կազմելու են իսպանախոս «լատինոսները» (այսօր արդեն վերջիններիս թիվը պաշտոնական տվյալների համաձայն կազմում է նվազագույնը 23 մլն, իսկ «լատինոսներից» շատերը դուրս են վիճակագրության ոլորտից):

Նրանք, ինչպես նաև սեւամորթները, որոշ նահանգներում կազմելու են մեծամասնություն, ձգտելու են դուրս գալ ԱՄՆ կազմից եւ ստեղծել իրենց սեփական պետությունը: Առայժմ հայտնի չէ, թե այդ վտանգի դեմ պայքարելու համար կոնկրետ ինչ մեթոդներ է առաջարկում Հանտինգտոնը: Սակայն հաշվի առնելով նրա՝ ԱՄՆ կառավարական կառույցների հետ մոտիկ լինելը, պետք է ենթադրել, որ արդեն մշակվում են այդ երեւոյթի դեմ պայքարի համապատասխան ծրագրեր:

**Մ. Դեյլագինի «գլոբալ տնտեսական ճգնաժամի» սցենարը:**

Ինչպես գիտենք, իբրեւ ԽՍՀՄ փլուզման պատճառներից մեկը մատնանշվում է նրա չափազանց «կոշտ» պլանային տնտեսական մոդելը: Միեւնույն ժամանակ տնտեսագետների մի ստվար հատված գտնում է, որ ավելի քան ոչ կատարյալ է նաև տնտեսության ազատական մոդելը: Նման մոդելի «գերճկունությունը» կարող է հանգեցնել ոչ միայն մասնավոր, այլև գլոբալ ճգնաժամերի, որի հետեւանքները կարող են աղետալի լինել ԱՄՆ համար:

Մոսկովյան Գլոբալիզացիայի հիմնախնդիրների ինստիտուտի տնօրեն Միխայիլ Դեյլագինի մոտեցման համաձայն, 2020 թվականի նախաշեմին ԱՄՆ-ին համակելու է խոր տնտեսական ճգնաժամ, որը պայմանավորված է լինելու «արտադրական» կապիտալի համեմատ՝ բորսայական գործարքների հետեւանքով առաջացած «սպեկուլյատիվ» կապիտալի մասնաբաժնի մեծացմամբ: Արդեն այսօր «սպեկուլյատիվ» կապիտալը գնահատվում է որպես հանընդհանուրի 60-70%, եւ այս ցուցանիշը աճելու միտում ունի: Հաշվի առնելով, որ համաձայն տարբեր աղբյուրների՝ ԱՄՆ-ին է պատկանում համաշխարհային ՀՆԱ մոտ 20-30%-ը եւ որ նրա տնտեսության հետ այս կամ այն չափով կապված են աշխարհի մնացած երկրները, ապա տնտեսական ճգնաժամը ԱՄՆ-ում լուրջ հիմնախնդիրներ է առաջացնելու ողջ աշխարհում: Այդ ամենի հետեւանքով ԱՄՆ-ը կորցնելու է ոչ միայն իր առաջատար դիրքը. ըստ Դեյլագինի, այդ երկրում տեղի են ունենալու համակարգային փոփոխություններ անկանխատեսելի հետեւանքներով:

**Յո. Գալտունգի «բարոյականության անկման» վարկածը:**

Շարունակելով ԱՄՆ-ԽՍՀՄ համեմատությունները, նշենք, որ որոշ վերլուծաբաններ համարում են, թե վերջինիս փլուզման հիմնապատճառը ընկած է արժեքային համակարգի խարխլման եւ բարոյականության անկման հարթությունում: Նման մոտեցումը, համաձայն նորվեգացի հայտնի քաղաքագետ Յոհան Գալտունգի, հիմնավորված է նաև ԱՄՆ պարագայում: Քաղաքագետի հիմնական թեզը հետեւյալն է. ԱՄՆ-ը վերածվել է կայսրության, իսկ կայսրությունները ենթակա են փլուզման,

քանի որ կառավարման նման ձեւը հանգեցնում է ներքին անլուծելի հակասությունների առաջացման: Որպես հիմնական հակասություններ՝ Գալտունգը նշում է ԱՄՆ-ում բարոյականության անկումը, ժողովրդավարական սկզբունքների եւ ԱՄՆ հարձակողական արտաքին քաղաքականության անհամատեղելիությունները: Գալտունգը գտնում է, որ այսօրվա Բաղդադը հանդիսանում է «Բուշի Ստալինգրադը» եւ որ նախագահ Բուշն իր գործողություններով արագացնում է ամերիկյան կայսրության փլուզումը: Որպես ԱՄՆ փլուզման հնարավոր ժամկետ նշվում է 2020թ.: Ըստ Գալտունգի, կայսրության տրոհումն ընթանալու է փափուկ: Գործընթացը հանգելու է նրան, որ ամերիկացիները դուրս են բերելու իրենց զորքերը արտերկրում տեղաբաշխված ռազմակայաններից (Պենտագոնի 2003թ. հաշվետվության համաձայն՝ ԱՄՆ-ը 702 ռազմակայան եւ հենակետ ունի մոտ 130 երկրներում) եւ դադարելու են վարել գլոբալ արտաքին քաղաքականություն: Այդ ամենի հետեւանքով ԱՄՆ տնտեսական իրավիճակը անգամ կարող է բարելավվել (ինչպես դա տեղի ունեցավ Մեծ Բրիտանիայում անցյալ դարի 50-ականներին, երբ նա հրաժարվեց գաղութներից եւ այդպիսով դադարեց լինել կայսրություն):

### **ԱՄՆ «գերկանխարգելիչ ռազմավարությունը»**

Ունենալով հզոր «ուղեղային կենտրոնների» ցանց, որտեղ մշակվում ու քննարկվում են ամենազանազան սցենարներ, ԱՄՆ բարձրագույն ղեկավարությունն արդեն այսօր փորձում է ուղիներ փնտրել խուսափելու ապագայում անցանկալի զարգացումներից: Այդպիսի աշխատանքի արտահայտություն է, այսպես կոչված, «գերկանխարգելիչ ռազմավարության» հայեցակարգը: Վերջինիս տրամաբանությունն այն է, որ ԱՄՆ-ը պետք է նախահարձակ լինի ոչ միայն այն երկրների կամ ահաբեկչական կազմակերպությունների նկատմամբ, որոնք արդեն ունեն, օրինակ, զանգվածային ոչնչացման զենք (ՁՈՁ) եւ որը կարող են օգտագործել ԱՄՆ-ի դեմ, այլ նաեւ այն երկրների նկատմամբ, ովքեր կարող են *ապագա*  *այում* ունենալ ՁՈՁ եւ այն օգտագործել ԱՄՆ-ի դեմ: Նման մոտեցումը վերաբերում է ոչ միայն ՁՈՁ-ին, այլ նաեւ այն տարաբնույթ գործոններին, որոնք կարող են վտանգել ԱՄՆ անվտանգությունը ռազմական, քաղաքական, տնտեսական, տեղեկատվական եւ այլ ոլորտներում:

Միեւնույն ժամանակ, ԱՄՆ «ապագան շտկող» նախահարձակ գործողություններն այսօր հարուցում են միջազգային հանրության (առաջին հերթին ԵՄ, ՌԴ, Չինաստանի եւ Իրանի) աճող եւ ավելի շոշափելի դարձող պատասխան քայլերը: Որքան էլ տարօրինակ թվա, նման ռազմավարությունը ոչ միայն լրացուցիչ բարդություններ է առաջացնում



ԱՄՆ-ի համար այսօր, այլևս խթանում է նրա համար անբարենապաստ զարգացումներ ապագայում: Սակայն ընդհանուր առմամբ տպավորությունն այնպիսին է, որ անհրաժեշտ ուշադրություն դարձնելով մարտահրավերներին՝ ԱՄՆ-ը թերեւս կարող է խուսափել փլուզման «կոշտ» սցենարներից:

### **ԱՄՆ առաջատարության պահպանմանն ուղղված հայեցակարգեր**

Վերլուծական գրականությունում կարելի է հանդիպել տասնյակ մշակումներ, որտեղ քննարկվում են այն քաղաքական հայեցակարգերը եւ տեխնոլոգիաները, որոնց կիրառումը թույլ կտա ԱՄՆ-ին պահպանել առաջատար դիրքերն աշխարհում կամ էլ նվազագույնը ապահովել «փափուկ նահանջը»: Թերեւս առավել համակարգված (բայց ոչ լիովին) դրանք նկարագրվում են քաղաքագետ Անատոլի Ուտկինի աշխատություններում: Ներկայացնենք դրանցից մի քանիսը:

❖ ***Sոտալ ուժային դոկտրինա.*** այս մոտեցման համաձայն, ԱՄՆ-ը պետք է հիմնականում ապավինի իր ռազմական գերակայությանը եւ հետևողականորեն հզորացնի իր զինված ուժերը: Այս համատեքստում խիստ կարեւոր դերակատարում ունի Հակահրթիռային պաշտպանության համակարգը, որը կկարողանար «փակել» ոչ միայն ԱՄՆ տարածքը, այլ նաեւ Արեւմտյան Եվրոպան, Արեւելյան Ասիան եւ Պարսից ծոցը:

❖ ***Բրիտանական մոդել.*** այս հայեցակարգի էությունն այն է, որ ԱՄՆ-ը պետք է կրկնի Բրիտանական կայսրության փորձը: Վերջինս 19-րդ դարում հասավ հեգեմոնիայի մնացյալ աշխարհի հանդեպ: Սակայն զարգացումները եւ գաղութներում, եւ աշխարհում ստիպեցին անգլիացիներին նախորդ դարի 50-ական թվականներին հրաժարվել իրենց կայսերական նկրտումներից: Ստեղծված պայմաններում այլևս անհնար էր տոտալ կերպով վերահսկել իրավիճակը աշխարհով մեկ սփռված կայսրությունում: Միեւնույն ժամանակ Մեծ Բրիտանիան կարողացավ «փափուկ» քաղաքական քայլերով պահպանել նախկին գաղութներում իր ազդեցության զգալի մասը եւ տնտեսական շահերը: Այս տարբերակի առիթով նշենք, որ որոշ հետազոտողներ այն կարծիքին են, որ Բրիտանիայի կայսերական մոդելից նահանջն ավելի շուտ ցուցադրական բնույթ էր կրում: Թերեւս կարելի է խոսել անգլոսաքսոնյան կայսրության փոխակերպման մասին, որտեղ ԱՄՆ-ին «հանձնարարված է» կատարել ուժային-ռազմական պարտականություններ:

❖ ***Բիսմարկի մոդելը.*** համաձայն ռազմավարության դասական սկզբունքների, տերությունն իր դիրքերը պահպանելու համար պետք է

գործադրի բոլոր ջանքերը, որպեսզի մրցակից պետությունները չմիավորվեն իր դեմ: Այդ համատեքստում ընդունված է համարել, որ կանխատեսելի ապագայում ԱՄՆ-ը կարող է պարտության մատնել իր հակառակորդներին առանձին-առանձին, բայց նրանց միավորման դեպքում հաղթանակը դառնում է խնդրահարույց, եթե ոչ անհնարին: Որոշ վերլուծաբաններ գտնում են, որ ԱՄՆ-ը իր առաջատարությունը պահպանելու նպատակով պետք է հետելի 19-րդ դարի Գերմանիայի կանցլեր Օտտո Բիսմարկին պատկանող հետելյալ դոկտրինալ բնույթի թեզին. «*Եթե հին մեծ տերությունների միջև առկա է ոչ կայուն հավասարակշռություն, աշխատիր լինել եռյակի մեջ*»: Հետեւելով բիսմարկյան դրույթին՝ ԱՄՆ քաղաքականությունը ապագայում կարող է հանգել մի մանրամասնորեն համակարգված ռազմավարության, համաձայն որի՝ հնարավոր կոալիցիաների ստեղծումը կանխարգելելու նպատակով նա միանում է ավելի հզոր մեծամասնությանը: Նկատենք, որ նման, թերեւս առավել կատարելագործված ռազմավարություն ԱՄՆ-ը փորձում է իրագործել այսօր եվրասիական տերությունների նկատմամբ:

❖ **Աջակցիր երկրորդին.** այս հայեցակարգի էությունն այն է, որ ամեն մի տարածաշրջանում ԱՄՆ-ը պետք է աջակցի նշանակությամբ եւ հզորությամբ երկրորդ տերությանը՝ այդպիսով արգելակելով տարածաշրջանային առաջատարների ձեւավորումը: Գործնականում դա նշանակում է, որ ԱՄՆ-ը պետք է դաշնակցի Մեծ Բրիտանիայի հետ ԵՄ-ի դեմ, Արեւելյան Ասիայում նա պետք է համագործակցի ճապոնիայի հետ Չինաստանի դեմ, Արեւելյան Եվրոպայում՝ Ուկրաինայի հետ ընդդեմ Ռուսաստանի եւ այլն: Այդ համատեքստում նկատենք, որ այսօր ԱՄՆ մերձավորարեւելյան ռազմավարությունը բավական կոշտ կապված է միայն Իսրայելի հետ եւ այդպիսով ԱՄՆ-ը փաստորեն զրկվել է Սաուդյան Արաբիայի եւ Իրանի նկատմամբ «աջակցիր երկրորդին» քաղաքականություն վարելու հնարավորությունից: Միեւնույն ժամանակ ներկայացված հայեցակարգը ԱՄՆ-ը բավական արդյունավետ կիրառում է Եվրասիայում: Փաստ է, որ այսօր ԱՄՆ-ը ավելի զարգացած հարաբերություններ է կառուցել Ռուսաստանի, Չինաստանի, ճապոնիայի, Հարավային Կորեայի հետ, քան նրանք դա կարողացել են անել մինչյանց միջեւ: Սակայն այսօր իրադրությունը այդ հարթությունում փոխվելու միտումներ է ցուցաբերում:

❖ **Ընտրյալ գործընկերներ.** համաձայն այս մոտեցման, ԱՄՆ-ը պետք է ստեղծի մի դիրեկտորատ, որը կազմված լինի Հյուսիսային Ամերիկայի, Եվրոպայի եւ Արեւելյան Ասիայի գլխավոր տերություններից: Այդ դիրեկտորատի անդամներ կարող են լինել, օրինակ, ճապոնիան, Գերմանիան, Ռուսաստանը, Հնդկաստանը, Բրազիլիան: Նման դիրեկ-

տորատի նախատիպ կարող է հանդիսանալ ներկայիս «Մեծ ութնյակը», սակայն ավելի կանոնակարգված եւ միջազգային իրավունքի դաշտում գտնվող ձեւաչափով: Մասնավորապես ենթադրվում է ձեւավորել 10 անդամներից բաղկացած մի մարմին, որոնցից հինգը կունենան մշտական անդամի կարգավիճակ: Այդ տարբերակում, օրինակ, ԱՄՆ-ը ստանում է Արեւմտյան կիսագնդի «պատասխանատուի» կարգավիճակ, Ռուսաստանը եւ Գերմանիան, ռոտացիայի կարգով, ԵՄ-ը ներկայացնող տերության հետ միասին պատասխանատու են դառնում եվրոպական տարածաշրջանի համար, Չինաստանը եւ Ճապոնիան, ինչպես նաեւ Հարավարեւելյան կամ Արեւելյան Ասիան ներկայացնող «ռոտացիոն» տերությունը պատասխանատու են Հեռավորարեւելյան տարածաշրջանի համար: Անշուշտ, ներկայացված պետք է լինեն նաեւ Մերձավորարեւելյան, Միջերկրական եւ Աֆրիկյան տարածաշրջանների ներկայացուցիչները: Բնորոշ է, որ նման դիրեկտորատը ծրագրվում է ստեղծել ՄԱԿ-ի կառուցվածքում, եւ այն ենթադրաբար կոչվելու է «Խաղաղության պահպանման անվտանգության դիրեկտորատ»:

❖ **Երկու Ամերիկա.** համաձայն մեկ այլ սխեմայի, ենթադրվում է ԱՄՆ մերձեցումը Արեւմտյան կիսագնդի երկրների հետ: Հայտնի է, որ ՆԱՖՏԱ-ի (Հյուսիսամերիկյան ազատ առեւտրի տարածքի) ստեղծումը հանգեցրեց նրան, որ ԱՄՆ առեւտրի ծավալներն անմիջական հարեւանների հետ կրկնապատկվեցին: 1998թ. ապրիլին կայացած «Երկու Ամերիկաների» վեհաժողովին մասնակցեցին 34 պետություն, որոնք որպես գերնպատակ հայտարարեցին երկու Ամերիկաների համար ազատ առեւտրի տարածք (ՖՏԱԱ) ստեղծելը: Նկատենք, որ այս տարբերակը ավելի համահունչ է ԱՄՆ նահանջի եւ մասնակիորեն մեկուսացման ծրագրերին:

❖ **Անգլոսաքսերի միություն.** այսօր ակնհայտ է, որ Հանտինգտոնի կողմից ձեւակերպված միացյալ արեւմտյան քաղաքակրթություն հասկացությունը հնացել է: Հակասությունները ԱՄՆ եւ ԵՄ միջեւ միայն խորանալու միտում ունեն, դրանք բնութագրվում են ոչ միայն տնտեսական կամ ռազմաքաղաքական շահերի տարբերություններով, այլեւ քաղաքակրթական բնույթի առանձնահատկություններով: Բավական է նշել, որ ամերիկյան նեոկոնսերվատորները ԱՄՆ հիմնական ակտյանների շարքին են դասում ոչ միայն իսլամական արմատականներին, հզորացող Չինաստանին կամ էլ եվրասիական տարածքների տիրող Ռուսաստանին, այլ նաեւ Ֆրանսիային: Նման համընդհանուր «թշնամական շրջապատի» թեզի գաղափարախոսները գտնում են, որ ԱՄՆ միակ հուսալի դաշնակիցները կարող են հանդիսանալ անգլիախոս ժողովուրդները: Նշենք, որ այսօր այդ մոտեցումը առավել ակտիվ շրջանառության մեջ է մտցնում ԱՄՆ

Հանրապետական կուսակցության ավանդական «ուղեղային կենտրոն» Ամերիկյան ձեռներեցության ինստիտուտը (American Enterprise Institute): Անգլոսաքսերի միությունն ստեղծելու կողմնակիցները համոզված են, որ միայն անգլիախոս ժողովուրդներն են պատկանում այն քաղաքակրթությանը, որը, համաձայն քաղաքագետ Ռ. Կոնկվիստի դիպուկ արտահայտության, հանդիսանում է «անարխիզմի եւ դեսպոտիզմի միջինը»: Համարվում է, որ միայն այդ ժողովուրդներն են, որ ունեն քաղաքական-մշակութային եւ հոգեկերտվածքային ընդհանրություն, որը չի ենթարկվում ժամանակի ազդեցությանը: Նման դաշնակիցների շարքում ակնհայտորեն առաջնային տեղ է գրավում Միացյալ թագավորությունը: Թերեւս արժե նշել, որ անգլիախոս ժողովուրդների դաշինքի գաղափարին առանձնահատուկ ուշադրություն էր դարձնում Մեծ Բրիտանիայի վարչապետ Ուինստոն Չերչիլը: Նկատենք, որ ռազմական համագործակցությունը անգլիախոս երկրների միջեւ առկա է վաղուց: Այն իր արտահայտությունն է գտել ոչ միայն Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին: Անգլոսաքսոնյան միության վառ արտահայտություն է դեռեւս «սառը պատերազմի» տարիներին ձեւավորված գլոբալ ռադիո-էլեկտրոնային հետախուզության «էշելոն» համակարգը, որի մասնակիցներն են, ԱՄՆ-ից բացի՝ Մեծ Բրիտանիան, Կանադան, Ավստրալիան, Նոր Զելանդիան, բայց ոչ ՆԱՏՕ-ի անդամ եվրոպական երկրները: Բնորոշ է, որ վերջերս ԱՄՆ կողմից հայտարարված հակահրթիռային համակարգը նույնպես հիմնականում ներգրավում է անգլիախոս երկրներին:

Հայեցակարգերի այս ցուցակը կարելի է եւ շարունակել: Սակայն պետք է ընդգծել, որ այսօր ԱՄՆ-ը իր գլոբալ քաղաքականությունը վարելիս երբեւէ չի հենվում միայն մեկ կամ անգամ մի քանի մոդելի վրա: Ամերիկյան ռազմավարությանը բնորոշ է ոչ միայն տարբեր դոկտրինալ մոտեցումների համալիր կիրառումը, այլեւ, ելնելով իրադրության ճշգրիտ գնահատականներից՝ նրանց յուրօրինակ սիներգետիկ համադրումը: Նման քաղաքական ներուժի առկայությունը թերեւս վկայում է այն մասին, որ եթե անգամ այլ ուժի կենտրոնների ճնշման հետեւանքով ԱՄՆ-ը կորցնի իր առաջատարությունը, ապա այդ անցումը կկատարվի «փափուկ» եւ առանց մեծ ցնցումների:

Միեւնույն ժամանակ շատ բան կախված է Միացյալ Նահանգների մրցակից տերություններից: Եթե նրանք չկարողանան վարել համապատասխան ռազմավարություն, չի կարելի բացառել նաեւ միաբեւեռ աշխարհակարգի ոչ թե փլուզումը, այլ ամրապնդումը՝ ԱՄՆ գլխավորությամբ:

**ԴԻՑԱՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ  
ԵՎ ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ԱՆՋՐՊԵՏՆԵՐԸ  
Դավիթ Չովհաննիսյան**

20-րդ դարի դիցաքաղաքականության մեջ «պատ» բառը հիշողության մեջ անմիջապես արթնացնում է «սառը պատերազմի» հիմնական խորհրդանիշ դարձած Բեռլինյան պատը եւ այն բոլոր իրադարձություններն ու գործընթացները, որոնք կապված են ոչ միայն 1961թ. ճգնաժամի, այլ նաեւ «սառը պատերազմ» եզրի ամբողջ բովանդակության հետ:

«Պատ»-ի դիցաբանական իմաստը համապատասխան բառարաններում սովորաբար երկակի բնութագրում ունի՝ պաշտպանական նշանակություն եւ մասնատվածության խորհրդանիշ:

Բեռլինյան պատը խորհրդանշում էր «սառը պատերազմի» ժամանակաշրջանին հատուկ՝ աշխարհի երկու ճամբարների բաժանված լինելը, մեկ աշխարհում երկու տարբեր աշխարհների, իսկ ավելի հստակ՝ երկու քաղաքակրթական համակարգերի պայքարը: Մինչեւ Բեռլինյան պատի կառուցումը նույն իրողությունը, բայց ավելի մեղմ դրսևորումներով, բնութագրում էր Ուինստոն Չերչիլի հայտնի ֆուլտոնյան ճառում հնչած «երկաթե վարագույր» արտահայտությունը<sup>1</sup>:

1989թ. Բեռլինյան պատի անկումից հետո թվում էր, որ աշխարհը վերջապես միավորվում է՝ հաղթահարելով մասնատվածությունը, սակայն չանցավ մի քանի տարի, եւ Ս.Հանտինգտոնը հրապարակեց իր «Քաղաքակրթությունների բախում» աղմկահարույց աշխատությունը, որի լույս տեսնելը ինքնին նշանակում էր նոր մասնատվածության արտահայտություն:

2004թ. հուլիսի սկզբին Հասագայի միջազգային դատարանը, որը Միավորված Ազգերի Կազմակերպության գերագույն դատական մարմինն է, որոշում կայացրեց այն մասին, որ Իսրայելի ինքնապաշտպանության իրավունքը չի կարող արդարացնել նրա կողմից պաղեստինցիների իրավունքների խախտումը, ինչն ակնհայտորեն տեղի է ունենում Չորդանան գետի արեւմտյան ափին պաշտպանական պատի կառուցման հետեւանքով:

Միջազգային դատարանի որոշման հրապարակմանն անմիջապես հետեւեց Սպիտակ տան խոսնակ Մաքլելանի հայտարարությունն այն մասին, որ Միացյալ Նահանգների կարծիքով՝ «Միջազգային դատարանը չի հանդիսանում համապատասխան մարմին՝ քաղաքական հարցի

լուծման համար, եւ հարցը պետք է լուծվի գործի դրված գործընթացի միջոցով»:

Մաքլելանը նկատի ունի միջինարեւելյան խաղաղ գործընթացը եւ մասնավորապես՝ «Ճանապարհային քարտեզ» իսրայելա-պաղեստինյան կարգավորման ծրագիրը, որով նախատեսվում է պաղեստինյան պետության ստեղծում, ինչպես նաեւ երկու պետությունների հետագա խաղաղ գոյակցությունը ապահովող հարաբերությունների նորմալացմանն ուղղված քայլերի համակարգ:

Մաքլելանը նշել է նաեւ, որ Միացյալ Նահանգները քննարկում է պաշտպանական պատի կառուցման խնդիրը Իսրայելի իշխանությունների հետ՝ ընդունելով այդ պետության ինքնապաշտպանության պահանջը, սակայն նշելով, որ իսրայելցիները պետք է «թույլ տան պաղեստինյան ժողովրդին ազատ տեղաշարժվել այդ տարածաշրջանի սահմաններում»:

Ինչպես 1961թ. հարցը դրվել էր գերմանական երկու պետությունների ճանաչման մասին, այնպես էլ 2004թ. խնդիրը երկու պետությունները՝ Իսրայելը եւ Պաղեստինը, անկախ եւ իրավահավասար ճանաչելն է:

Բեռլինյան պատի կառուցումը նույնպես ժամանակին հիմնավորվում էր անվտանգության պահանջներով: Ըստ խորհրդային աղբյուրների՝ Արեւմտյան Բեռլինը, որտեղ գործում էին արեւմտյան հատուկ ծառայությունների 80-ից ավելի կենտրոններ, օգտագործվում էր ԳՖՅ կողմից՝ ԳԴՅ տնտեսությունը թուլացնելու եւ այնտեղ լրտեսներ ու դիվերսանտներ ուղարկելու համար, եւ այս գործում հատկապես լայնորեն էր օգտագործվում Արեւելյան եւ Արեւմտյան Բեռլինի միջեւ բաց սահմանը:

Հարկ է նշել, որ այն ժամանակ ԱՄՆ նախագահ Ջոն Ֆ. Բենեդիկն անմիջապես հայտարարեց, որ պատի կառուցումը չի համապատասխանում ազդեցիկ ամերիկյան ընկալմանը, ինչը պարզ էր դարձնում, որ Միացյալ Նահանգները ռազմական միջոցներ չի կիրառելու այս մարտահրավերին պատասխան տալու համար:

Փաստորեն արտաքին հատկանիշներով նշված երկու իրավիճակները շատ նման են իրար: Բովանդակային առումով տարբերությունները ակնհայտ են, չնայած այս տեսակետից էլ կարելի է մի շարք նմանություններ գտնել: Հասկանալի է, որ Բեռլինյան պատը բաժանում էր իրարից երկու գաղափարախոսությունների վրա կառուցված հասարակություններ, որոնցից մեկը հավատարիմ էր ժողովրդավարական սկզբունքներին եւ դրանց հիման վրա կարողացավ միավորվել եվրատլանտյան անվտանգության համակարգի մեջ (ՆԱՏՕ), իսկ մյուսը՝ համայնավարական բառամթերքով շաղախված ամբողջատիրական կայսրություն, որից կախման մեջ ընկած Արեւելյան Եվրոպայի մի շարք երկրների հետ

ստեղծվեց մեկ այլ անվտանգության համակարգ՝ Վարչավայի պայմանագիրը:

Հորդանանի արեւմտյան ափին կառուցվող պատը ցույց է տալիս, թե ուր է այժմ տեղափոխվել բաժանարար գիծը:

Անշուշտ, հնարավոր է նոր ձեւակերպում ստացած հին իրողությունը մեկնաբանել հանտինգտոնյան ոգով. երկու քաղաքակրթություններ բախման մեջ են մտել, եւ այդ բախման սահմանագիծը անցնում է այնտեղ, որտեղ հպվում են արեւմտյան ժողովրդավարական արժեքների վրա հիմնված, հրեական-քրիստոնեական ակունքներ ունեցող քաղաքակրթությունը, որին պատկանում են տնտեսապես զարգացած երկրների «ինֆորմացիոն» կամ «պոստինդուստրիալ» որակավորվող հասարակությունները եւ որը ներկայացված է ի դեմս Իսրայելի եւ տնտեսապես թերի զարգացած, հումքային երկրների մուսուլմանական քաղաքակրթությանը պատկանող հասարակություններ՝ ի դեմս պաղեստինցիների:

Սակայն աշխարհաքաղաքական եւ գլոբալ տնտեսության տեսակետից իրավիճակի ընկալումը բավականին տարբերվում է վերը նշված մեկնաբանությունից:

Եթե գլոբալ տնտեսության շահերի առումով առանձին բացատրություններ հարկավոր չեն (միջինարեւելյան տարածաշրջանը հարուստ է նավթի պաշարներով, այն հանդիսանում է ենթակառուցվածքների կարելորագույն հանգույցներից մեկը, որի վերահսկումը անհրաժեշտ է նոր աշխարհակարգով նախատեսված ապրանքների եւ ֆինանսների ապահով տեղափոխման համար, պարունակում է մեծ քանակությամբ էժան աշխատուժեւ այլն), ապա աշխարհաքաղաքական նշանակությունը ավելի հստակ պատկերացնելու համար ավելորդ չէ հիշել արդիական դարձած մի քանի խոշոր ծրագրերի մասին:

Համեմատաբար վերջերս շրջանառության մեջ դրված «Մեծ Միջին Արեւելք» ծրագիրը արդեն սկսում է կիրառման համար հաստատված գործողությունների նախագծի տեսք ստանալ: Այն քննարկվել եւ հավանության է արժանացել այս տարվա հունիսին տեղի ունեցած Մեծ Ութնյակի առաջնորդների հանդիպման ժամանակ, ծրագրի բաղադրյալները քննարկվել եւ համապատասխան փաստաթղթերի տեսքով ընդունվել են ԱՄՆ – Եվրամիություն խորհրդակցության ժամանակ՝ Ստամբուլում կայացած ՆԱՏՕ-ի գագաթաժողովի նախօրյակին: Վերջապես, հունիսի վերջին Ստամբուլում մի շարք որոշումներ են ընդունվել, որոնք այս կամ այլ չափով առնչվում են նշված ծրագրի իրականացման հետ:

Դրանցից ամենակարեւորները կապված են ՆԱՏՕ-ի, ԱՄՆ-ի եւ Եվրամիության միջինարեւելյան տարածաշրջանում համատեղ գործողությունների սկզբունքների ընդունման հետ: Գործողությունները տարբեր են

իրենց բնույթով. մի կողմից՝ համատեղ պայքար ահաբեկչության դեմ, ինչը ներառում է հետախուզական տվյալների փոխանակումից սկսած մինչև տարածաշրջանի երկրների սահմանների հսկման գործում ՆԱՏՕ-ի և Միացյալ Նահանգների զինված ուժերի հնարավոր օգտագործումը, մյուս կողմից՝ Միջերկրական երկխոսության ակտիվացում, որն ուղղված է այս ծրագրի մեջ ընդգրկված միջինարեւելյան մի շարք երկրներին տնտեսական և սոցիալական օգնություն ցուցաբերելուն և որի հիմնական նպատակն է՝ կարգավորել և կանոնակարգել դեպի Եվրամիության երկրներ ուղղված միգրացիոն հոսքերը:

Այստեղ կարելու է նաև այն, որ ՆԱՏՕ-ն միանշանակորեն համաձայնել է՝ իր ավանդական գործողության տարածաշրջանից դուրս գալ և գործել այն տարածաշրջանում, որի երկրները չեն դիտարկվում որպես Եվրաստլանտյան անվտանգության համակարգի մեջ ընդգրկվելու թեկնածուներ:

Հարկ է նշել, որ ԱՄՆ-ի, ՆԱՏՕ-ի և Եվրամիության միասնականությունը նշված հարցերում առաջ է բերում նոր իրողություն, երբ Միացյալ Նահանգները պատրաստ է զգալիորեն հրաժարվել համաշխարհային միակ բեւեռ լինելու հավակնություններից՝ ընդհանուր պատասխանատվությունը Եվրամիության հետ կիսելու նպատակով: Ամերիկյան քաղաքականության մեջ նկատվող այս նոր միտումների հետևանքները կարող են բախտորոշ նշանակություն ունենալ գլոբալ քաղաքականության համար, քանի որ դրանով իսկ մեղմվում են Միացյալ Նահանգների հակասություններն իրենց եվրոպական դաշնակիցների հետ, ինչը թույլ է տալիս այս միասնական ուժին նպատակամղված կերպով վերակառուցել համաշխարհային կառավարման հնացած համակարգը:

Հորդանանի արեւմտյան ափին կառուցվող պատը խորհրդանշում է մարդկության մի նոր որակի մասնատվածություն, և նրա պաշտպանական դերը այս նոր հակադրումների պայմաններում հարցականի տակ է:

<sup>1</sup> Արտահայտությունն ամբողջությամբ այսպես է հնչում. «Ձվելով ամբողջ մայրցամաքով Շտետինից Բալթիկ ծովի ափին մինչև Տրիեստ Ադրիատիկ ծովում, Եվրոպայի վրա երկաթե վարանույր իջավ»: «Երկաթե վարագույր» եզրը ունի թատերական ծագում, այն օգտագործվել է անգլիական թատրոններում՝ հակահրդեհային նպատակներով, իսկ քաղաքական իմաստով սկսել է կիրառվել 19-րդ դարում: Սակայն թեւավոր արտահայտություն դարձավ միայն այն բանից հետո, երբ հնչեց Չերչիլի ֆուլտոնյան ճառում:



## ՄԵՐՁԱՎՈՐԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԷԱՐԱՆՈՒԹՅՈՒՆԸ

### *Սարգիս Հարությունյան*

**ա.** «Սառը պատերազմի» ավարտից հետո Մերձավոր Արեւելքն այն սակավաթիվ տարածաշրջաններից էր, որտեղ դեռեւս երկբեւեռ աշխարհակարգի պայմաններում գոյացած աշխարհաքաղաքական համակարգը պահպանեց իր կառուցվածքը: Անշուշտ, Խորհրդային Միության փլուզումը էական փոփոխություններ մտցրեց տարածաշրջանում առկա ազդեցությունների փոխդասավորվածության վրա, սակայն այդ ազդեցությունները զգալիորեն պահպանեցին իրենց բնույթը:

Փաստորեն, մինչեւ 1990-ական թթ. վերջը, ինչպես «սառը պատերազմի» ժամանակաշրջանում, Մերձավոր Արեւելքի աշխարհաքաղաքական կառուցվածքում էական դերակատարություն ունեին Միացյալ Նահանգների հովանավորած Իսրայել – Թուրքիա դաշինքը, արաբական աշխարհում Սաուդյան Արաբիայի պահպանողական եւ միաժամանակ արեւմտամետ դիրքորոշումը, ինչպես նաեւ 1970-ական թթ. կեսերից եզրափակված քաղաքական վեկտորի փոփոխությունը դեպի Արեւմուտք:

Հակառակորդ խմբավորումը այսպիսի պատկեր ուներ. Սիրիան, որի վրա զգալի էր ԽՍՀՄ ազդեցությունը, 1979թ. հետո ի հայտ եկած իսլամական Իրանը, որն էլ, փաստորեն, սկզբնավորեց նոր բնույթի զարգացումները տարածաշրջանի աշխարհաքաղաքական համակարգում, եւ Իրաքը, որը 1980-ական թթ. վերջից փորձում էր հանդես գալ որպես արաբական կայսրության կենտրոն՝ հիմքում ունենալով համաարաբականությունը:

Պետք է ասել, որ առաջին խմբավորման թե՛ ռազմաստրատեգիական դասավորվածությունն ու կարողությունները, թե՛ նրա վերահսկողության ներքո գտնվող ռեսուրսները հնարավորություն էին ընձեռում տարածաշրջանում ստանձնել ավելի ազդեցիկ դերակատարություն, որի արդյունքում խմբավորումը եւ նրա հետեւում կանգնած բեւեռը (Արեւմուտք – ԱՄՆ) գերազանցապես հանդես էին գալիս տարածաշրջանում status quo-ի պահպանման օգտին: Այդ առումով, խմբավորման քաղաքական գծի առանցքը, փաստորեն, «աշխարհաքաղաքական պահպանողականությունն» էր կամ, ավելի ճիշտ՝ «աշխարհաքաղաքական հակահեղափոխականությունը»:

Որպես համակարգ՝ աշխարհաքաղաքական այդ փոխդասավորվածությունը (կառուցվածքը) պահպանվեց նաև «սառը պատերազմից» հետո, եւ ընդհուպ մինչեւ 1990-ական թթ. վերջերը տարածաշրջանում երևան եկած փոփոխությունները կրում էին մարտավարական բնույթ:

բ. 1990-ական թթ. վերջում, իսկ ավելի ակնհայտ՝ հաջորդ տասնամյակի սկզբում ի հայտ եկան նոր գործընթացներ, որոնք, ըստ էության, արմատական փոփոխություններ են մտցնում Մերձավոր Արևելքի աշխարհաքաղաքական կառուցվածքում:

Առաջին գործոնը Միացյալ Նահանգների գլոբալ ռազմավարության բնույթի փոփոխությունն էր, որն արտահայտվեց այդ ռազմավարության մեջ մեսիականության ընդգծմամբ, ինչը պետք է վերագրել ինչպես Ջորջ Բուշ-կրտսերի վարչակազմում ազդեցություն ունեցող նեոկոններին, այնպես էլ, հավանաբար, Միացյալ Նահանգների հզորության գագաթնակետում գտնվելուն: Փոփոխությունները վիրտուալ դաշտում իրենց արտացոլումը ստացան նաև իրականության մեջ: Realpolitic-ի առումով մեսիականությունն իր ազդեցությունն ունեցավ Վաշինգտոնի աշխարհաքաղաքականության վրա: Մասնավորապես, Մերձավոր Արևելքում Ջորջ Բուշ-կրտսերի վարչակազմը հայտարարեց ժողովրդավարացման իր մեծ ծրագրի մասին, շրջանառության մեջ մտավ «Մեծ Մերձավոր Արևելք» աշխարհաքաղաքական նախագիծը:

Երկրորդ գործոնը, որը, թերևս, ավելի վաղ ի հայտ եկավ, քան փոփոխությունները ամերիկյան գլոբալ ռազմավարության մեջ, գաղափարախոսական շարժերն էին Մերձավոր Արևելքում:

Խնդիրը քսաներորդ դարի կեսերից վերելք ապրող «իսլամական վերածնունդի» մեջ է: Արդեն 1990-ական թթ. սկզբին իսլամական երկրների մեծ մասում վերնախավը եկավ այն եզրակացության, որ թե՛ ԽՍՀՄ, թե՛ ԱՄՆ առաջարկած մոդելները չեն արտացոլում տեղական ողջ առանձնահատկությունը: Ավելին՝ «իսլամական վերածնունդը», որը «օգնեց» այդ երկրների վերնախավին գիտակցելու վերոհիշյալը, առաջարկեց իր մոդելը: Արդյունքը եղավ այն, որ ասպարեզ եկավ քաղաքակրթական մի նոր «ուժի կենտրոն», որը հայտ ներկայացնելով «իսլամական տարածաշրջանի» համար՝ առաջին հերթին մարտահրավեր նետեց Միացյալ Նահանգներին:

Փաստորեն, այդ երկու գործոններն են, որոնք հիմնականում պատճառ հանդիսացան Մերձավոր Արևելքի աշխարհաքաղաքական կառուցվածքում սկզբնավորված փոփոխությունների համար: Համակարգային առումով այդ կառուցվածքի առանցքը հանդիսացող «աշխարհա-

քաղաքական պահպանողականությունը» կամ status quo-ն այլևս անցան անցյալի գիրկը: Նրանց փոխարինելու եկավ հեղափոխականությունը՝ հեղափոխական մոտեցումը թե՛ ամերիկյան մեսիականության, թե՛ «իսլամական վերածննդի» կողմից, ինչն ուղղակի ազդեցություն ունեցավ մերձավորարեւելյան աշխարհաքաղաքական գծերի վրա:

**գ.** Որպես իրավիճակի փոփոխության ցուցիչներ հանդես են գալիս հետեւյալ իրադարձությունները:

Առաջինը՝ արդեն 2002թ. ամռանը բացահայտ դարձած սաուդա-ամերիկյան հակասություններն են, որոնք հասել են հակամարտության եւ Սաուդյան թագավորությունից ամերիկյան ռազմակայանների դուրսբերման խնդրին:

Երկրորդ ցուցիչը իրաքյան զարգացումներում քրդական գործոնի առանձնանալն է: Ընդ որում, քրդական գործոնի առանձնացումը հարկ է կարելուրել որպես մերձավորարեւելյան աշխարհաքաղաքական կառույցի համակարգային նորություն (ԱՄՆ աջակցությունը քրդերին, իսրայելա-քրդական հարաբերությունների խորացումը, քրդական վերնախավի դիրքորոշման կոշտացումը մերձավորարեւելյան մի շարք հարցերի կապակցությամբ):

Երրորդը՝ Իսրայել-Թուրքիա հարաբերությունների վատացումն է: Թուրքիան, ըստ էության, չեղյալ հայտարարեց Թել Ավիվի հետ կնքած մոտ \$ 2 մլրդ-ի ռազմական գործարքը եւ սույն թվականի մայիսին Իսրայելից հետ կանչեց իր դեսպանին:

Չորրորդ՝ որոշակի տեղաշարժեր են նկատվում թուրքական վերնախավում եւ Թուրքիայի արտաքին քաղաքականության մեջ (արաբական ուղղություն, Իրան): Թե՛ Իրաքի հետ կապված ԱՄՆ ու նրա դաշնակիցների քաղաքականությունը, թե՛ Եվրամիությանն անդամակցելու Անկարայի վերջին տարիների անհաջողությունները թուրքական վերնախավին դրդում են վերաիմաստավորել «իսլամական տարածաշրջանի» հետ իր կապերը:

**դ.** Այստեղ հարկ է ուշադրություն դարձնել հետեւյալ հանգամանքների վրա:

Ակնհայտ է, որ Թուրքիայում նոր զարգացումներ են սպասվում: Պետք է փաստել, որ թուրքական վերնախավում առկա վերաիմաստավորման նշանները այլևս նորություն չեն:

Եվրամիության ինտեգրող, իսկ ԱՄՆ (մասնավորապես՝ Իրաքի հարցում) ատոմիզացնող ռազմավարությունները արդեն իսկ իրենց անդրա-

դարձն են ունեցել արտաքին քաղաքականության բնագավառում եւ մարտահրավերների ընկալման ու նպատակների ձեւավորման Անկարայի մոտեցումների վրա: Այդ առումով, Թուրքիայի դիրքորոշումը իրաքյան հարցում, երբ նա մերժեց օժանդակել ամերիկյան ներխուժումը, եւ աջարական խնդրում, երբ պաշտոնական Անկարան պաշտոնական Վաշինգտոնից որոշակիորեն տարբեր դիրքորոշում արտահայտեց (վեր հանվեց 1921թ. Կարսի պայմանագիրը), ճգնաժամերի օրերին մեզ կարող են ծառայել որպես ապացույցներ:

Մյուս կողմից՝ «իսլամական վերածնունդը» կամ ավելի ճիշտ՝ «իսլամական կայսերական համակարգը» նպատակ ունի Թուրքիան «խլել» Արեւմուտքից (ԱՄՆ-ից), որպեսզի վերջինս զրկվի իսլամական աշխարհում իր կարեւորագույն գործընկերոջից (որը հանդես է գալիս իբրեւ իսլամական աշխարհում Արեւմուտքի հետ գոյակցելու մոդել), թեւ կարող է պարզվել, որ Թուրքիայի իրական իսլամականացմանը դեմ չեն նույն Վաշինգտոնում:

Պետք է նաեւ առանձնացնել Իրանի հետ կապված զարգացումները: Մի կողմից՝ ստեղծված են այն օբյեկտիվ պատճառները, որոնք կարող են նպաստել թուրք-իրանական մերձեցմանը, իսկ մյուս կողմից՝ պետք է նոր զարգացումներ ակնկալել ԱՄՆ-Իրան հարաբերություններում, որը որշակի առումով կարող է հակադարձվել առաջինին: Հաշվի առնելով ներկայումս ստեղծված իրավիճակը՝ Վաշինգտոնն ինքն է շահագրգիռ համագործակցել Իրանի հետ:

**ԻՍԼԱՄԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ  
ԱՅԼԱԴԱՎԱՆՆԵՐԻ ՆԿԱՏԱՄԲ  
*Արաքս Փաշայան***

Ի սկզբանե իսլամը, որ կոչ էր անում հրաժարվել բազմաստվածությունից՝ հոգուտ միաստվածության, խիստ բացասական վերաբերմունք ուներ հեթանոսների (*ալ-մուշրիքուն*) եւ անհավատների (*ալ-քուֆֆար*) նկատմամբ:

Իսլամի հաղթանակից հետո հեթանոսների համար այլընտրանք չկար: Նրանք կամ պետք է ընդունեին իսլամը, կամ կյանքով հատուցեին, քանի որ իսլամն ու բազմաստվածությունն անհամատեղելի են: Համաձայն ավանդույթի՝ մարգարեն կոչել է մարտնչել կռապաշտների դեմ, մինչեւ որ նրանք չասեն՝ «Չկա աստված բացի Ալլահից»: Հեթանոսների դեմ դաժան պայքարի կոչեր կան նաեւ իսլամի դավանաբանության սկզբնաղբյուր հանդիսացող գրքում՝ Ղուրանում («Երբ ավարտվեն սրբազան ամիսները, սպանե՛ք հեթանոսներին, որտեղ որ գտնեք նրանց...») (9;5):

Իսլամն անհանդուրժող է նաեւ անհավատների նկատմամբ: Ղուրանում աստված կոչ է անում մահմեդականներին պատերազմել անհավատների դեմ. «...թող նրանք զգան ձեր դաժանությունը: Ինացե՛ք, որ Ալլահն աստվածավախների հետ է» (9;124):

Այս համատեքստում իսլամը պետք է հանդուրժող կեցվածք որդեգրեր ոչ իսլամադավան հավատացյալ ժողովուրդների նկատմամբ: Ղուրանում միաստվածականները հիշատակված են որպես *ահլ ալ-քիթաբ*, այսինքն՝ գրոց ժողովուրդ: Դրանք *սուրբ* □ *հրք* ունեցող ժողովուրդներն են՝ հիմնականում քրիստոնյաներն ու հրեաները, որոնք միջակա տեղ են զբաղեցնում մի կողմից մահմեդականների, մյուս կողմից՝ հեթանոսների ու անհավատների միջեւ:

Իսլամի հաղթարշավից եւ խալիֆայության կազմավորումից հետո փոխհարաբերությունները մահմեդականների եւ միաստվածականների միջեւ կարգավորվեցին իսլամական իրավունքի միջոցով: Մահմեդական իրավական դպրոցների մշակած նորմերը հիմնավորվեցին հադիսներում՝ Մուհամմադ մարգարեին վերագրվող խոսքերով կամ Ղուրանի առանձին ասույթներով:

Մահմեդական նվաճողական արշավանքների (*ալ-ֆութուհաթ*) ժամանակ հանդուրժողականությունը *ահլ ալ-քիթաբի* նկատմամբ պայմանա-

վորված էր նաեւ նրանցից աջակցություն ստանալու ակնկալիքով: Այս առումով ուշագրավ է Երուսաղեմի Հայ եկեղեցին, որի համար արաբական նվաճումներից հետո ստեղծված վիճակն ավելի բարենպաստ էր, քան Բյուզանդիայի տիրապետության շրջանը (Հայ եկեղեցին իր միաբնակ լինելու պատճառով անընդհատ ճնշման էր ենթարկվում հունական եկեղեցու կողմից): Երուսաղեմի Հայ եկեղեցու առաջնորդը, կանխատեսելով արաբների մոտակա ներխուժումը, ճանապարհորդում է Մեքքա եւ Մուհամմադ մարգարեից ստանում հրովարտակ, որը երաշխավորում էր Երուսաղեմում բնակվող հայերի կյանքի եւ գույքի ապահովությունը: Միաժամանակ մարգարեն ճանաչում է Հայ եկեղեցու իրավունքները Երուսաղեմի բոլոր այն սրբատեղիների նկատմամբ, որոնք գտնվում էին նրա վերահսկողության ներքո: Հետագայում, երբ Օմար խալիֆը 638թ. գրավեց Երուսաղեմը, նա իր նոր հրովարտակով հաստատեց բոլոր այն երաշխիքները, որ Մուհամմադ մարգարեն տվել էր Երուսաղեմի Հայ եկեղեցուն: Ի դեպ, հետաքրքիր է նաեւ այն հանգամանքը, որ Արաբական խալիֆայության մեջ հայտնված Հայաստանը դավանափոխ չեղավ, այն դեպքում, երբ իսլամն արագորեն տարածվեց Իրանում եւ Հյուսիսային Կովկասում:

Իսլամական պետության մեջ քրիստոնյաները, հրեաները եւ մյուս միաստվածականները միայն այլակրոնության հարկի կամ ամենամյա գլխահարկի (*ալ-ջիզյա*) դիմաց ազատվեցին հետապնդումից եւ ստացան հովանավորյալի հատուկ կրոնական կարգավիճակ՝ *ահլ ալ-զիմմա* (բառացի՝ պայմանագրի ժողովուրդ): *Ձիմմիներին*, այսինքն՝ մահմեդականների պաշտպանության ներքո գտնվողներին, թույլատրվեց դավանել սեփական կրոնը, երաշխավորվեցին նրանց կյանքը, ազատությունը, ունեցվածքի անձեռնմխելիությունը: Իրենց հերթին մահմեդականները պարտավոր էին հարգանքով վերաբերվել *զիմմիներին* եւ իրականացնել նրանց նկատմամբ ստանձնած բոլոր պարտականությունները: Համաձայն ավանդույթի՝ մարգարեն մահմեդականներին կոչ է արել չհետապնդել նրանց՝ ահեղ դատաստանին չարժանանալու համար: *Ձիմմիներին* նկատմամբ կիրառվել է *մուսհիդ* եզրը, որ արաբերեն նշանակում է միաստվածական:

*Ձիմմիների* նկատմամբ իրավական նորմերը, թեեւ ոչ լրիվ համակարգված, սկսեցին գործել արդեն Մուհամմադ մարգարեի օրոք: Վերջինս Արաբական թերակղզում բնակվող քրիստոնյաների հետ պայմանագրեր կնքեց նրանց կողմից իսլամը հարգելու եւ *ջիզյա* վճարելու մասին: Սկզբնական շրջանում *ջիզյան* ձեւական բնույթ էր կրում՝ ամրագրելով մահմեդականների իրավական իշխանությունը ոչ իսլամադավանների նկատմամբ:

Փաստորեն, միաստվածականներին հավատափոխ չանելը պայմանավորվեց նրանց հարկատու դարձնելով: Այս մասին Ղուրանում կա համապատասխան նշումը. «Մարտնչե՛ք գրոց ժողովրդի դեմ, որոնք չեն հավատում ո՛չ Ալլահին եւ ո՛չ էլ դատաստանի օրվան, որոնք պիղծ չեն համարում այն, ինչ պիղծ են համարել Ալլահը եւ նրա առաքյալը եւ ոչ էլ հետեւորդն են ճշմարիտ հավատքի, մինչեւ որ նվաստացած, իրենց իսկ ձեռքով չվճարեն քիզյան» (9; 29):

Իսլամական իդեալը մի այնպիսի աշխարհ էր ուրվագծել, ուր հեթանոսներն ու անհավատները կվերանային, իսկ գրոց ժողովուրդները կապրեին մահմեդականների իշխանության մեջ, այսինքն՝ *դար ալ-իսլամում* (կամ իսլամի աշխարհում): Իսկ պատերազմի աշխարհը՝ *դար ալ-հարբը*, որտեղ իշխում էին ոչ մահմեդականները, ի վերջո, *քիհադի* միջոցով, կվերածվեր *դար ալ-իսլամի*: Սկսվելու էր մահմեդականների համընդհանուր տիրապետության շրջանը: Այսպիսին էր իսլամի գլոբալ ռազմավարությունը միջնադարում: Քանի որ իսլամը դիտվում էր որպես կատարյալ կրոն, իսկ Մուհամմադը՝ վերջին մարգարեն, մնացած կրոնադավանական համայնքները հրավիրվում էին, նախեւառաջ, հաղորդակից դառնալու նոր կրոնին, ապա՝ ընդունելու այն:

Փաստորեն, ոչ մահմեդականներին առաջարկվում էր երկընտրանք՝ կամ իսլամի ընդունում եւ լիարժեք անդամություն իսլամական համայնքին (*ուսմա*), կամ՝ դավանանքի պահպանում եւ գլխահարկի վճարում:

Միջնադարյան մահմեդական իրավագետներն ու հեղինակները՝ *զհմմիների* խնդրին անդրադառնալիս, հակված են մեջբերել հատկապես հադիսներում Մուհամմադ մարգարեին վերագրվող խոսքերը, որոնցում նա, ինչպես նշեցինք, կոչ է արել չտոնահարել *զհմմիների* իրավունքները, չճնշել նրանց, հակառակ դեպքում վնաս կհասցվի հենց իրեն՝ մարգարեին, ուրեմն եւ կարժեզրկվի ինքնին աստված: Իսլամի գաղափարախոսության հունանիզմը շեշտելիս՝ մահմեդական հեղինակները հաճախ են մեջբերում Ղուրանի հետեւյալ այսբը՝ «Կրոնի մեջ հարկադրանք չկա» (2;257):

Միջնադարյան արաբ հեղինակ իբն Յազնը նշում է, որ հպատակների հետ հովանավորության պայմանագիր կնքած մահմեդականները պետք է մինչեւ վերջ պաշտպանեն նրանց իսլամական պետության մեջ, որպեսզի հավատարիմ մնան ամենաբարձրյալ աստծո եւ նրա մարգարեի՝ իրենց տված երաշխիքը, այլապես կհամարվեն դավաճաններ:

Պատմական իրողություն է նաեւ այն, որ իսլամական տարբեր հասարակություններում, մասնավորապես, խալիֆայության գաղափարը մարմնավորած Օսմանյան կայսրության մեջ, *ահլ ալ-զհմմայի* սոցիալա-

կան եւ իրավական վերոնշյալ սկզբունքը ոչ իսլամադավան հպատակների նկատմամբ, ընդհանուր առմամբ, չի գործել:

Չօգուտ հայերի *ահլ ալ-զիմնայի* սկզբունքը գործեց առաջին աշխարհամարտից հետո, երբ ցեղասպանությունից մազապուրծ եղած գաղթական հայերը հանգրվանեցին արաբական երկրամասում: Արաբների օժանդակությունը հայերին ավելի իրատեսական եւ պաշտոնական դարձավ Մեքքայի շերիֆ էմիր Յուսեյն իբն Ալիի՝ 1916 եւ 1917թթ. իր հավատակիցներին հասցեագրած ուղերձներից հետո: Դրանցում, խոսելով Միջագետքի անապատներում անօթեւան մնացած հայերի մասին, նա պահանջում էր տեղական իշխանավորներից (հիմնականում՝ ցեղերի առաջնորդներից)՝ պաշտպանել, հովանավորել ու ամեն տեսակ օգնություն ցույց տալ հայերին. «Առաջնորդվելով իսլամի պատվիրաններով եւ նրա օրենքներով՝ պաշտպանեք նրանց այնպես, ինչպես պաշտպանում եք ձեր որդիներին, ձեր ունեցվածքը, որովհետեւ նրանք զիմնիներ են»: Դժվար է ասել, թե ինչ կլիներ հայ տարագրյալներին, եթե չլինեին Յուսեյն իբն Ալիի ուղերձները:

Ժամանակակից մահմեդական հեղինակ Յուսուֆ ալ-Կարդաուլին իր «Ոչ մահմեդականները իսլամական հասարակության մեջ» (ԱՄՆ, 1985թ.) գրքում նշում է, որ չնայած Դուրանում առանձին սուրահների առկայությունը, մահմեդականների պարտականությունն է պաշտպանել ոչ մահմեդականներին արտաքին ագրեսիայից կամ ճնշումներից, եթե նրանք ապրում են իսլամական հասարակության մեջ:

Ներկայումս մահմեդական երկրները գտնվում են միզազգային իրավունքի նոր դաշտում եւ ենթակա են դրա օրենքներին: Մահմեդական երկրներում ապրող փոքրամասնությունները տվյալ պետության լիիրավ քաղաքացիներ են, որոնց թույլատրվում է դավանել սեփական կրոնը, եւ չնայած որոշակի սահմանափակումներին, ունենալ սեփական դպրոցներ, մշակութային եւ մարզական ակումբներ:

Միաժամանակ, այսօր մահմեդական առանձին շրջանակներ, այնուամենայնիվ, հակված են սահմանազատել *իսլամի աշխարհը* մնացյալ աշխարհներից, մահմեդականներին՝ ոչ մահմեդականներից: Մասնավորապես, այսպես է ներկայացված իսլամի աշխարհը քարտեզներում, որ թողարկում են իսլամական ամենատարբեր կազմակերպությունները: Կենսունակ պահելով իսլամականի եւ ոչ իսլամականի սահմանազատման՝ իսլամով ամրագրված սկզբունքները՝ նրանք փորձում են այդպիսով նպաստել մահմեդականների համախմբմանը, ինչպես նաեւ՝ միջազգային հարաբերություններում իսլամական գործոնի առավել ակտիվացմանը:



**ԻՍՐԱՅԵԼ ՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՌԱԶՄԱԿԱՆ ԴՈԿՏՐԻՆԱՅԻ ՄԱՍԻՆ  
Ս. Ս. ԽՄԵԼԻՆԵՑ**

Իսրայելի ռազմական դոկտրինան սկսեց ձևավորվել հրեական պետության ստեղծման հետ միաժամանակ: Իր գոյատևման ողջ ընթացքում այն մշտապես նորացվել է կատարելագործվել է՝ Իսրայելի ու արաբական պետությունների միջև ուժերի հարաբերակցության փոփոխմանը, տարածաշրջանային եւ միջազգային իրադրությունում նոր հանգամանքների ու զինված պայքարի նոր միջոցների առաջացմանը համապատասխան: Անփոփոխ է մնացել միայն պոտենցիալ հակառակորդի՝ թշնամական արաբական երկրների վրա ուժային ճնշում գործադրելու կողմնորոշումը:

Իսրայելի ռազմական դոկտրինան ռազմաքաղաքական ղեկավարության կողմից պաշտոնապես ընդունված հայացքների ամբողջություն է՝ ուղղված պետության ազգային անվտանգությանը սպառնացող վտանգների, հնարավոր պատերազմի բնույթին, նրա վարման ձևերին ու միջոցների, ռազմական շինարարությանն ու երկիրը պատերազմի նախապատրաստելուն:

Պատերազմի գլխավոր նպատակն է դիմակայող կողմին վճռորոշ ռազմական պարտության մատնելը, հակառակորդի ռազմական ու տնտեսական կառույցների ոչնչացումը կամ առավելագույն թուլացումը՝ զինված պայքարի բոլոր միջոցներով, ներառյալ զանգվածային ոչնչացման զենքը: Այս նպատակի իրականացումը հանգում է՝ հակառակորդին իսրայելական պայմաններով խաղաղության համաձայնագրեր ստորագրելու պարտադրմանը:

Իսրայելն իր հիմնական հակառակորդներ է համարում Սիրիան, Իրաքը, Իրանը եւ Լիբիան: Լիբիին բացառված չէ նաեւ Եգիպտոսի կողմից ռազմական սպառնալիքը: Իսրայելցիների համար լարվածության մշտական աղբյուր է հանդիսանում Լիբանանի հետ սահմանամերձ գոտում իսլամական դիմադրության ուժերի զինված պայքարը, ինչպես նաեւ երկրի տարածքում պաղեստինյան խմբավորումների ահաբեկչական գործունեությունը:

Թեւ Ավիվի գլխավոր ռազմավարական դաշնակիցը ԱՄՆ-ն է, որը պաշտոնապես երաշխավորում է նրա անվտանգությունը եւ հատկացնում է զգալի ռազմատնտեսական օգնություն: Անմիջականորեն Մերձավոր

Արեւելքի տարածաշրջանում իսրայելցիներն իրական դաշնակիցներ չունեն: Ներկայումս, չնայած մերձավորարեւելյան կարգավորման մեջ դրական տեղաշարժերին, Իսրայելի ռազմական դոկտրինան առաջվա պես կառուցվում է արաբական երկրների թշնամական շրջապատման առկայության հաշվարկով եւ կրում է հնարավոր ճգնաժամային իրավիճակներին «ակտիվ հակադարձման» բնույթ: Նրա հիմնական բաղադրիչն, այսպես կոչված, «ահաբեկման ռազմավարությունն» է՝ հիմնված «ագրեսորին պատժելու» անխուսափելիության վրա: Իսրայելցիները գտնում են, որ արաբների դեմ կռիվներում իրենց հաղթանակները, որոնց արդյունքը եղավ հակառակորդի տարածքների զավթումը, արաբական երկրներին հետ են պահում նոր զինված բախումների սանձազերծումից:

Տարածաշրջանային հակամարտություններում ռազմական ուժ կիրառելու հայեցակարգի մշակման ժամանակ իսրայելական հրամանատարությունը հաշվի է առնում, որ Իսրայելի չնչին մեծությունը եւ ռազմավարական «խորության» բացակայությունը հանգեցնում են մարտական գործողությունները թշնամու տարածք փոխադրելու անհրաժեշտությամբ: Պաշարների սահմանափակությունը, առաջին հերթին՝ մարդկային, բացառում է երկար ժամանակով ռազմական գործողությունների անցկացման հնարավորությունը եւ առաջադրում է դիմակայող կողմին արագ ջախջախելու անհրաժեշտություն: Ներկայումս դրան կարելի է հասնել միայն զանգվածային ոչնչացման զենքի կամ դրա գործադրման սպառնալիքի օգնությամբ:

Իսրայելի զինված ուժերի կողմից պատերազմ վարելու հիմնական ձեւը օդացամաքային հարձակումն է: Իսրայելցիները գտնում են, որ մարտական գործողությունները պետք է կրեն սրընթաց եւ վճռական բնույթ՝ զուգորդելով բանակի լայնածավալ զորաշարժն ու տարածքի մեծ խորություն խոցելու արդյունավետ միջոցների զանգվածային օգտագործումը: Հատկապես այս հայեցակարգը, որ հիմնված է գրավման եւ նախաձեռնության պահպանման, անսպասելի ուղղություններով հզոր հարվածներ հասցնելու ճանապարհով հակառակորդի կազմալուծման ու նրա գորամիավորմանը մարտունակության վերականգնման հնարավորությունից զրկելու վրա, կարող է կանխորոշել պատերազմի հաջող ընթացքը:

Սովորական սպառազինությունների օգտագործման հետ մեկտեղ, Իսրայելի ռազմաքաղաքական ղեկավարությունը թույլատրում է պատերազմում զանգվածային ոչնչացման զենքի կիրառումը՝ որպես թշնամու վրա ներգործման ծայրահեղ եւ առավել հզոր միջոց:

Իսրայելական ռազմական դոկտրինան ընդունում է կանխարգելիչ պատերազմի վարման կամ հակառակորդի կարեւորագույն օբյեկտներին՝ Իսրայելի անվտանգությանն իրական վտանգ սպառնացող նրանց գործունեության դեպքում նախազգուշական հարվածներ հասցնելու հնարավորությունը: Ընդ որում, առավել հավանական կարող են լինել պատերազմի սանձազերծման հետեւյալ ձեւերը.

–անակնկալ հարձակում խաղաղ ժամանակներում նախօրոք ստեղծված առաջավոր զորամիավորումներով,

–հարձակում մասնակի զորահավաքային ծավալումից եւ առաջավոր զորամիավորումների արագացված հզորացումից հետո,

–հարձակում զորահավաքային ծավալման բոլոր միջոցառումների անցկացումից եւ զորքերի վերախմբավորումից հետո:

Միաժամանակ, հարկ է նշել, որ վերջերս Իսրայելի զինված ուժերում հարձակողական խնդիրների մշակման հետ մեկտեղ մեծացել է նաեւ օպերատիվ ծրագրերի մշակման եւ պաշտպանական գործողությունների նախապատրաստման հանդեպ ուշադրությունը:

Մարտական նախապատրաստության ընթացքում մշակվում են պաշտպանական տարրերով հարձակողական գործողություններ հետեւյալ երեք ուղղություններով. 1. հյուսիսային՝ Լիբանանի եւ Սիրիայի դեմ (հիմնական ուղղություն), 2. արեւելյան՝ Հորդանանի դեմ, 3. հարավային՝ Սինայի թերակղզու ուղղությամբ, Եգիպտոսի դեմ:

Հաշվի առնելով երկրի աշխարհագրական դիրքը՝ իսրայելական հրամանատարությունը ռազմաօդային զորքերը դիտում է որպես գլխավոր հարվածային ուժ եւ հակառակորդի տարածքում գտնվող օբյեկտները խոցելու հիմնական միջոց: Ցամաքային զորքերում հիմնական ջանքերն ուղղվում են զրահատանկային (մեքենայացված) եւ օդադեսանտային զորքերի կատարելագործման վրա: Փոքրաքանակ, սակայն լավ հանդերձավորված ռազմածովային ուժերի խնդիրն է ծովում թշնամու գործողությունների չեզոքացումը: Իսրայելի զինվորական մասնագետները համարում են, որ ժամանակակից պատերազմում հաղթանակը ձեռք է բերվում նախ եւ առաջ զինված ուժերի բոլոր զորատեսակների համաձայնեցված գործողությունների արդյունքում: Ուստի առանձնակի նշանակություն է տրվում նրանց միջեւ հստակ համագործակցության կազմակերպմանը: Բարձր պահանջներ են ներկայացվում հետախուզությանը՝ որպես մարտական ապահովման հիմնական միջոց:

Կարեւոր զսպող գործոն է համարվում արաբական երկրների, առաջին հերթին՝ Սիրիայի ու Եգիպտոսի զինված ուժերի նկատմամբ որակական գերազանցության պահպանումը: Համաձայն սույն դրույթի,

Իսրայելում արդիականացվում են պատերազմի վարման բոլոր միջոցները: Ժամանակակից տեխնոլոգիական բազայի վրա ստեղծվում են զենքի եւ ռազմական տեխնիկայի նոր տեսակներ, առաջին հերթին՝ հրթիռային ու զրահատանկային, կատարելագործվում են զորքերի եւ զենքերի կառավարման, կապի, հետախուզության համակարգերը (նաեւ տիեզերական միջոցների օգտագործմամբ), ինչպես նաեւ զինված ուժերի բոլոր տեսակների զորամիավորումների ու զորամասերի կազմակերպական-հաստիքային կառուցվածքները:

Սակայն արաբական երկրների հանդեպ ռազմատեխնիկական գերազանցության հասնելու գործում հիմնականում հույսը դրվում է ԱՄՆ հետ ռազմական ուղորտում կապերի զարգացման վրա:

Իր ռազմադոկտրինալ հայացքներում Իսրայելը ոչ պակաս նշանակություն է տալիս զանգվածային ոչնչացման զենքին: Այսպես, 1993թ. նա ստորագրեց քիմիական զենքի մշակումը, արտադրությունը, կուտակումը եւ կիրառումը արգելող համաձայնագիրը, բայց մինչ այժմ այն չի վավերացրել: Դա նախ եւ առաջ պայմանավորված է նրանով, որ երկյուղելով Սիրիայի, Իրանի ու Եգիպտոսի քիմիական զենքերի ներուժի մեծացումից, Թել Ավիվն անհրաժեշտ է համարում ունենալ այդ պետություններից զսպելու միջոցների բավարար զինանոց: Բացի այդ, համաձայնագրի վավերացման դեպքում Թել Ավիվը պարտավորված կլինի թույլատրել քիմիական զենքի արգելման կազմակերպության տեսուչների մուտքը իր գիտական եւ արդյունաբերական օբյեկտներ, ինչն առայժմ նպատակահարմար չի համարվում:

Այսպիսով, Իսրայելի ռազմաքաղաքական ղեկավարությունը՝ հայտարարելով Մերձավոր Արեւելքում քիմիական զենքի տարածումը սահմանափակելու իր ձգտման մասին, փաստորեն մոտ ապագայում մտադրություն չունի օժանդակել այդ զենքի պաշարների կրճատմանը եւ իր տարածքում դրա նկատմամբ հսկողության սահմանմանը:

Ինչ վերաբերում է միջուկային զենքին, ապա Իսրայելը պաշտոնապես չի ընդունում, բայցեւ չի ժխտում դրա առկայությունը:

## **Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

<b>Հրանտ Տեր-Աբրահամյան</b> <b>ԱԶԳԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ</b> <b>ՈՒՂԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ .....</b>	<b>1</b>
<b>Արսեն Հակոբյան</b> <b>ՀԱՅՈՒԹՅԱՆ ԱՅԼԱԼԵԶՈՒ ԵՎ ԱՅԼԱԴԱՎԱՆ ԽՄԲԵՐԻ</b> <b>ՄԱՍԻՆ .....</b>	<b>5</b>
<b>Կարեն Վերանյան</b> <b>ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԽԱԶԻԱՅՈՒՄ .....</b>	<b>11</b>
<b>Ռուբեն Սաֆրաստյան</b> <b>ՊԱՀՊԱՆՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՄՆ-ՈՒՄ .....</b>	<b>16</b>
<b>Գագիկ Տեր-Հարությունյան</b> <b>ԱՄՆ ԱՊԱԳԱՅԻ ԵՎ ԱՌԱՋԱՏԱՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ</b> <b>ԿԱՊՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐ .....</b>	<b>21</b>
<b>Դավիթ Հովհաննիսյան</b> <b>ԴԻՑԱՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ</b> <b>ԵՎ ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ԱՆՋՐՊԵՏՆԵՐԸ .....</b>	<b>29</b>
<b>Սարգիս Հարությունյան</b> <b>ՄԵՐՁԱՎՈՐԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ</b> <b>ԷԱՔԱՆՈՒԹՅՈՒՆԸ .....</b>	<b>13</b>
<b>Արաքս Փաշայան</b> <b>ԻՍԼԱՄԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ .....</b>	<b>37</b>
<b>Ս. Մ. Խմելինեց</b> <b>ԻՍՐԱՅԵԼ ՊԵՏՈՒԹՅԱՆ</b> <b>ՈԱԶՄԱԿԱՆ ԴՈԿՏՐԻՆԱՅԻ ՄԱՍԻՆ .....</b>	<b>41</b>

*Շապիկի վրա պատկերված է  
Ամբերդի ամրոցը*

§Ծ²Üð²ä°î²î²Ü|, Հայաստանի  
Հանրապետական կուսակցության հրատարակություն  
**Խմբագրական խորհուրդ**  
Երեւան, 375010, Մելիք-Ադամյան 2: Հեռ. 58 04 91, 58 04 83:  
Էլ. փոստ՝ hanrapetakan@hkh.am:  
Հիմնադիր՝ Հայաստանի Հանրապետական կուսակցություն:

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70×108 1/16:  
Պայմանական 3,5 մամուլ: Տպաքանակը՝ 1000:  
Տառատեսակը՝ «Arial Armenian» եւ «Vs Helvetica»:  
Վկայական՝ Օ1Մ 000176:  
Տպագրվել է «Ամարաս» տպարանում: